Արտաշես Քալանթարյան

ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐ

(ՊԻԵՄ ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ)

(ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)

1989թ.

Երևան

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Գործող անձինք

ԱՐԳԱՄ ՄԱՆԱՍՅԱՆ - Գործարանի դիրեկտոր
ՀԱՍՄԻԿ - նրա կինը
ՎՌԱՄ ՄԱՇՈՒՐՅԱՆ - դիրեկտորի տեղակալ
ՄԱՐԻԱՄ - նրա կինը
ՄՀԵՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ - գործարանի նկարիչ
ՍՈՒՍԱՆՆԱ - դիրեկտորի քարտուղարուհին
ՄՈՒՔԱՅԵԼ - հարևան
ԱՇՈՏ - Մանասյանի վարորդը
ՍԱՄՍՈՆ ԻՎԱՆԻՉ - մինիստր
ԱԼԹՈՒՆՅԱՆ - Կենտկոմի քարտուղար
ԳՈՒԼԱՆՅԱՆ - Արդյունաբերական բաժնի վարիչ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ - դատախազի օգնական
ԲԱԿՈՒՐ - Լաբորատորիայի վարիչ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Առաջին պատկեր

(Արգամ Մանասյանի տունը: Մեղան է գցված: Նստած են Վռամը, Մարիամը, Մուքայելը, Միհրը, Սուսաննան, Աշոտը, Հասմիկը: Մի կողմից ներս է մտնում Արգամը):

ԱՐԳԱՄ - *(ինքն իրեն)* Այդ չարաբաստիկ օրը, երբ ի վերջո տուն հասա, ճաշասենյակից ծիծաղի ձայներ լսեցի: Եվ շատ զարմացա:

ՀԱՍՄԻԿ - Որտե՞ղ էիր, Արգամ... Այսքան մարդ է հավաքվել: Գոնե այսօր չուշանայիր...

ԱՐԳԱՄ - Ինչո՞ւ: Այսօր ի՞նչ օր է, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ - Դու չգիտես, հա՞...

ԱՐԳԱՄ - *(Մտածելով)*: Իսկ ի՞նչ օր է որ...

ՀԱՍՄԻԿ - Քո ծննդյան օրը: Շուտ, Արգամ...

ԲՈԼՈՐԸ - Ուռռա...

ՄԱՐԻԱՄ - *(Ծիծաղելով, կոկետաբար)* Հետաքրքիր է, ո՞վ է թույլ տվել , որ նորածին երեխան այս ժամին դրսում լինի:

ՎՌԱՄ - Իսկապես, որտե՞ղ էիք, Արգամ Պետրովիչ, անհանգստանում էինք արդեն: Առանց ձեզ ոնց որ դատարկություն, պատառը կուլ չի գնում...

ՄՀԵՐ - *(Յույց տալով Վռամի դիմացի դատարկ ափսեները)*

Ինչպես տեսնում, եք կուլ չի գնում, էլի, հո զոռով չի...

ԱՐԳԱՄ - Մորս տեսնելու էի գնացել, Վռամ:

ՎՌԱՄ - Տեսա՞ք: Բա որ ասում էի: Մարիա՞մ: Ես քեզ չասացի՞, որ իր ծննդյան օրը Արգամ Պետրովիչը գնացած կլինի մորը տեսնելու: Այդ տեսակի մարդ է, է, ցավը տանեմ: Չասացի՞, որ գնացած կլինի:

ՄԱՐԻԱՄ - *(Զարմացած է և չգիտե ինչ անել)* Բա ընկեր Մանասյանի կենացը չե՞նք խմում:

ՎՌԱՄ - Հանգիստ նստիր...Ես ճիշտ է, գործարանում Արգամ Պետրովիչի խոնարհ տեղակալն եմ, բայց այստեղ, այս սեղանի մոտ թամադա եմ: Ճիշտ չէ՞, Արգամ Պետրովիչ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Ճիշտ է, ճիշտ է, Վռամ:

ՎՌԱՄ - Վերջ: Մյուսների կարծիքն ինձ չի հետաքրքրում: Եթե ճիշտ է, ուրեմն թույլ տվեք այս բաժակով շնորհավորել մեր սիրելի, անզուգական ընկերոջ, հրաշալի գիտնական ու փայլուն դիրեկտոր Արգամ Պետրոսի Մանասյանի ծննդյան հիսուներկու տարին:

ՄՀԵՐ - Էստեղից մինչև էստեղ սիրտ է:

ՎՌԱՄ - Դու լռիր, ընկեր նկարիչ, երբ մեծերն են խոսում... Սկսեմ սկզբից...

ՍՈՒՍԱՆ - Օ՜յ, գիտեմ, հիմա պատմելու է, թե ինչպես Արգամ Պետրովիչը գործարան եկավ:

ՎՌԱՄ - Այո, Սուսիկ ջան: Ես, ինչպես գիտեք, վաղուց տեղակալ էի գործարանում, և չթաքցնեմ, մեծ հույսեր ունեի, որ ինձ են նշանակելու դիրեկտոր: Եվ ահա, լսում եմ, թե նոր մարդ են բերում: Ո՞վ է, հարցրեցի: Թե՝ գյուղինստիտուտի ամբիոնի վարիչ Արգամ Մանասյանը... Այդ հրաշալի դասախոսն ու հանրահռչակ գիտնականը... Եթե համաձայնվել է գալ մեզ մոտ, ընդունում եմ ամբողջ հոգով, ա՜յ, այս գլխիս վրա և նույնիսկ հարկ եմ համարում հարցնել, թե այդպիսի անձը մի քիչ շատ չէ՞ մեր խղճուկ գործարանի համար: Հենց այդպես էլ ասացի: *(ծափեր)* Կենացդ մեծ մարդ, մեծատառով մարդ:

ԱՐԳԱՄ - *(ժպտալով)* Վերջ տուր, Վռամ, գիտես, որ այդպիսի խոսքեր չեմ սիրում: Ի՞նչ մեծ, ի՞նչ բան...

ՎՌԱՄ - Ուրեմն ես մեղավո՞ր եմ, որ դու մեծ ես: Չէ, դե ասա, է՜, մենք ինչ մեղավոր ենք, որ դու մեծ ես: Ես բոլորից առաջինը խմում եմ քո մեծ կենացը:

ՄՀԵՐ - Խմիր, խմիր, ջուրը փոքրինն է...

ՎՌԱՄ - Բա սա ջո՞ւր է... Մի քիչ խառնեցի ... Ամբողջ առաջադեմ Եվրոպան հիմա ջուր է խառնում խմիչքին, ընկեր Մհեր...

ՄՀԵՐ - Էդ կողմից մենք բոլորից առաջադեմն ենք... մեզ մոտ և գործարանում են խառնում և ռեստորանում...

ՄԱՐԻԱՄ - Խնդրեմ, նրա թեման միայն ռեստորանն է... *(Արգամին)* Ձեր կենացը, սիրելի մարդ... Ձեր կենացը, մեր ազնիվ բարեկամ...

ՍՈՒՍԱՆ - Սպասիբո, չտո վի եստ…

ՄՀԵՐ - Արև օրեր, Արգամ Պետրովիչ, կանաչ ճանապարհ...

ՄՈՒՔԱՅԵԼ - Անձամբ մեր գլխից անպակաս լինեք, հարևան... Մեր կնիկը մի քիչ լավ չէր, չեկավ, երկուսիս տեղն էլ խմում եմ: Ըհը... ու ըհը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Խոհանոցից ներս է մտնում Աշոտը)

ԱՇՈՏ - Սպասեք, բա ե՞ս... *(Վերցնում է բաժակը, նկատում, որ ձեռքը արյունոտ է, լպստում է)* Բաստուրմայի արյունն է, խորոված եմ սարքում: Ձեր կենացը, Արգամ Պետրովիչ: Թե իմ հորից ա՛յ էսքան տարբերում եմ՝ ամոթ ինձ: Ու աստված չանի, որ հանկարծ... որ հանկարծ... ձեզ տանեն մեզանից: Մի օր էլ չեմ մնա: Ձեզանից բացի ես ուրիշ պետի մոտ չեմ աշխատի, հարյուր տարի էլ մնա... Կներեք, ինձ խմել չի կարելի...

ՄՀԵՐ - Հա, ինձ էլ, ինձ էլ... *(խմում է)*

ՀԱՍՄԻԿ - *(Թիկունքից գրկում է ամուսնու ուսերը)* Միայն թե ողջ լինես, առողջ լինես:

(Արգամը ոտքի է կանգնում)

ՎՌԱՄ - Ուշադրություն, ոչ մի ձայն ու ծպտուն: Հոբելյարն է խոսում:

ԱՐԳԱՄ - Սիրելի բարեկամներ, այստեղ ինձ համար ամենաթանկ մարդիկ են նստած: Ամենամոտ մարդիկ: Շնորհակալ եմ ձեր բարի խոսքերի համար: Շնորհակալ եմ, որ չեք մոռացել այս օրը ու այստեղ եք:

ՄՀԵՐ - Բա դա մոռանալո՞ւ բան է:

ԱՐԳԱՄ - Ահա, իմ կողքին նստած է իմ աջ ձեռքը՝ Վռամ Մաշուրյանը: Անձնվիրության, աշխատասիրության և հավատարմության օրինակը: Եվ ինչպես միշտ՝ այնպես էլ այսօր, երբ նա իմ կողքին է, ես հանգիստ եմ:

ՎՌԱՄ - Տա աստված, որ միշտ ձեր կողքին լինեմ, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Ինչպես հայրս էր նման դեպքերում ասում՝ դու լուծ քաշող մարդ ես, սիրելի Վռամ, և մինչև հիմա ինձ հետ հավասար քաշել ես գործարանի լուծը:

ՎՌԱՄ - Չէ՛ մի... ձեզ հետ հավասար... ուսս տեղնուտեղը դուրս կընկներ:

ԱՐԳԱՄ - Բայց այն էլ ասեմ, որ դու դու չէիր լինի, եթե կյանքում քո կողքին չգտնվեր մեր սիրելի Մարիամը: Անվանի բժշկուհի է, հիանալի կին, աննման տանտիրուհի...

ՄՀԵՐ - Ափսոս որ, ինչպես Պարոնյանն է ասում՝ «Որպես կանոն այս տեսակ աղվոր կանայք բարբարոսների ձեռքը կիյնան»

(Ընդհանուր ծիծաղ)

ԱՐԳԱՄ - Թեև եթե մինչև վերջ անկեղծ լինեմ, աննման տանտիրուհու հարցում երևի մի քիչ չափազանցրի: Արդեն ամբողջ մի շաբաթ կլինի ինչ նրա պատրաստած սալաթները չենք փորձել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԱՐԻԱՄ - Արգամ Պետրովիչ, դուք և տիկին Հասմիկը միշտ մեր ընտանիքի ամենաթանկագին հյուրն եք:

ԱՐԳԱՄ - Հիմա դառնամ քեզ, նկարիչ եղբայր:

ՄՀԵՐ - *(Ծիծաղելով)* Առանց ողորմի տալու, խնդրում եմ:

ԱՐԳԱՄ - Եղավ: Մանավանդ, որ ինչքան ինձ հայտնի է, ողորմի տալու որևէ արժանիք չունես:

ՄՀԵՐ - *(Քրքջում է)* Ճիշտ եք, Արգամ Պետրովիչ, ճիշտ եք: Ծնողներս անհաջող դուրս եկան:

ՍՈՒՍԱՆ - Դու զզվելի ցինիկ ես, Միեր: Ինչպե՞ս կարելի է այդպես խոսել ծնողների մասին: Ծնողները սրբություն են: *(բոլորին)* Ճիշտ չէ՞:

ՄՀԵՐ - Ես հո քո ծնողների մասին չեմ ասում, փոքրիկս: Եվ ոչ էլ մյուսների: Ես իմ ծնողների մասին եմ ասում: Ես ասում եմ՝ դուք ձեր ծնողների կենացը մի՞ խմեք: Խմեք ինչքան սրտներդ կուզի: Բայց ինչո՞ւ եք ինձ ստիպում: Ես չեմ ուզում իմ ծնողների կենացը խմել: Ես թքել եմ նրանց վրա: Եթե նրանք ինձ օրորոցից լքել են ու որբ են թողել, ե՞ս ինչու պիտի հիշեմ ու պաշտեմ նրանց: Ապուշ հո չե՞մ:

ՍՈՒՍԱՆ - Օ՜հ, ես չգիտեի, խեղճ մարդ...

ՄԱՐԻԱՄ - Ինչպե՞ս թե... ուրեմն դու ծնողներ չե՞ս ունեցել, Միեր...

ՎՌԱՄ - Մի՞թե չի երևում, Մարիամ:

ՄՀԵՐ - Եթե մենք Արգամ Պետրովիչի տանը չլինեինք, Վռամ, ես քեզ շատ ավելի պարզ ցույց կտայի...

ԱՐԳԱՄ - *(Զայրացած)* Սա՞ ինչ բան է: Հարբա՞ծ եք, ինչ է... Անմիջապես ձեռք մեկնեք իրար: Ո՞վ սկսեց այս անհամ խոսակցությունը, Վռա՞մ...

ՎՌԱՄ - Ես չէի ուզում, Արգամ Պետրովիչ... Ներիր Միեր... Կատակեցի...

(Միերը ծանր շնչում է)

ԱՐԳԱՄ - Միե՞ր:

ՄՀԵՐ - Ենթարկվում եմ: Հնազանդվում եմ: Ներողություն...

ԱՐԳԱՄ- Շատ դյուրագրգիռ եք դարձել: Ի՞նչ է պատահել:

ՄՀԵՐ - Արգամ Պետրովիչ, որ չասեմ սիրտս կպայթի: Ես նկարիչ եմ, ազատ արվեստագետ և իմ հավատամքը անկախությունն է: Բայց քանի որ ոչ մի հնարավորություն չկա

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

անկախ ապրելու, երդվել եմ ենթարկվել միայն մեկին, իմ պետին: Ես անվերապահորեն ընդունում եմ ձեր հրամանները, դիտողությունները, ձեր կատակները, հումորը, նախատինքը... բայց ձեզանից բացի ուրիշ ոչ ոք իրավունք չունի ինձ հետ այդպես խոսելու:

ԱՇՈՏ - Իսկ եթե վաղը Վռամը դիրեկտոր դառնա՞:

ՄՀԵՐ - Կենթարկվեմ նրան: Եվ անվերապահորեն կընդունեմ նրա նախատինքները, հրամանները, կատակները, հումորը... եթե նույնիսկ չունենա:

ԱՐԳԱՄ - Այդ մտածողությամբ դու բոլորովին ուրիշ ճանապարհով պիտի գնայիր:

ՄՀԵՐ - Փորձել եմ, Պետրովիչ ջան, նկարիչ դառնալուց առաջ իրավաբան եմ եղել... Ոչ մի նշանակություն չունի... Ապրելու համար այլ ճանապարհ չկա:

ԱՐԳԱՄ - Լավ, ինչ վերաբերում է քեզ, սիրելի Սուսիկ...

ՍՈՒՍԱՆ - Ես Սուսիկ չեմ, Արգամ Պետրովիչ, ես Սուսաննա եմ:

ԱՐԳԱՄ - Էհ, աղջիկ ջան, ինքդ էլ չգիտես, թե որքան սուսիկ ես դու:

ՀԱՍՄԻԿ - Ճիշտ է, Արգամ, իսկական Սուսիկ-փուսիկ: Եվ շատ ուրախ եմ, որ դու գոհ ես Սուսանից:

ԱՐԳԱՄ - Իմ գոհ լինելն ի՞նչ կարևոր է, Հասմիկ ջան, ես ամեն ինչ անում եմ, որպեսզի Սուսանը գոհ լինի ինձանից... ժամանակին պատասխանում եմ զանգերին...

ՍՈՒՍԱՆ - Լավ էլի, Արգամ Պետրովիչ...

ՄԱՐԱՄ - Իսկ այդ ի՞նչ զանգեր են:

ԱՐԳԱՄ - Սովորական, Մարիամ ջան, ամենօրյա: Ընդունարանում պայթում է հեռախոսը՝ վերցնող չկա: Ստիպված ես եմ վերցնում: «Սուսանին եմ ուզում»,- ասում է մեկը: Շատ կներեք, բայց տեղում չէ, ասում եմ: «Բա որտե՞ղ է»,- բարկանում է խոսողը: Ամաչում եմ, բայց ի՞նչ կարող եմ անել: Չգիտեմ, ասում եմ...

ՍՈՒՍԱՆ - Լավ էլի, Արգամ Պետրովիչ...

ԱՐԳԱՄ - Որ գա,-ասում է, թող տեղից չշարժվի, ժամը երեքին զանգ եմ տալու: Ներողություն, ասում եմ, իսկ ի՞նչ ասեմ, ո՞վ է: «Սեյրանն է»:

ՍՈՒՍԱՆ - Վա՛յ, ճիշտ չի ասում: Լավ էլի, Արգամ Պետրովիչ, նրա անունը բոլորովին էլ...

(ծիծաղ)

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Ողջ լինես, Աշոտ: Ինձ համար հաճելի է քեզ հետ աշխատելը: Ժողովուրդ ջան, իմ բախտը զարմանալիորեն վարորդների հարցում չէր բերում: Հասմիկ հիշում ես Հմայակին, չէ՞:

ՀԱՍՄԻԿ - Իհարկե հիշում եմ:

ԱՐԳԱՄ - Էդ անխիղճը էնքան մռայլ էր, որ ամեն անգամ երբ նստում էի կողքին, ինձ թվում էր, թե ուրիշի ավտո է և վարորդն էլ կասկածում է, թե փողը չեմ տալու: Երբ հեռու ճանապարհ էինք գնում, ստիպված անեկդոտներ էի պատմում, որ տրամադրությունը մի քիչ բարձրանա: Երկրորդը հայրենադարձ էր: Այնքան ճաշակով ու նորաձև էր հագնվում, որ երբ անծանոթ տեղ էինք գնում, ինձ էին վարորդի տեղ դնում:

ՎՌԱՄ - Պողոսն էր, Պողոսը...

ԱՐԳԱՄ - Հա, պատահել է, որ ամաչել եմ, ու նրա փոխարեն ես եմ փոխել, ասենք անիվի դողը... Դե հո չէի թողնելու, որ հագուստը փոշոտվի... Իսկ Աշոտից առաջ մեկն էլ կար, որը չգիտես ինչու համոզված էր, թե գործարանի կադրերի տեղաբաշխումը իր գործն է: Մնում-մնում ասում էր. «Արգամ Պետրովիչ, լավ չէ՞ր լինի, եթե չորրորդ արտադրամասի պետ Նազարյանին տանենք երկրորդ արտադրամաս, գլխավոր տեխնոլոգ Պապիկյանին նրա տեղը դնենք, իսկ երկրորդի պետ Իփեկչյանին նշանակենք գլխավոր տեխնոլոգ: Լավ վարիանտ է: Այնքան խոսեց, այնքան «վարիանտներ» առաջարկեց, որ ի վերջո մի վարիանտ էլ ես գտա ու նրան տեղափոխեցի՝ էլեկտրաքարշի վրա աշխատելու:

ՎՌԱՄ - Գրիգորն է, Գրիգորը...

ԱՐԳԱՄ - Եվ ահա հայտնվեց մեր Աշոտը...

ԱՇՈՏ - Ինձ խնայեք, Արգամ Պետրովիչ...

ԱՐԳԱՄ - *(ծիծաղում է)* Խնայեցի: Եվ անցնում եմ առաջ՝ ողջ լինես հարևան Մուքայել:

ՄՈՒՔԱՅԵԼ - *(Հատակը ցույց տալով)* Դու իմ գլխից անպակաս լինես՝ բոլոր տեսակետներով: Շնորհակալ եմ իմ և մեր կնոջ անունից... *(Բարձրացնում է երկու բաժակ)*:

ԱՐԳԱՄ - Բոլորիդ շնորհակալություն հայտնեցի՞: Ոչ ոք չի՞ մնացել:

ԲՈԼՈՐԸ - Ոչ:

ԱՐԳԱՄ - Ուրեմն թույլ տվեք վերջին անգամ շնորհակալություն հայտնել ձեզ, որ ինձ չեք մոռացել...

ՄՈՒՔԱՅԵԼ - Եղա՞վ: Է՞դ ինչ կոֆե-կենաց էր: Ինչի՞ ես ուզում ճանապարհ գցել մեզ: Նոր ենք սկսել բացվել, հարևան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎՌԱՄ -Ճիշտ է: Ես քյուֆթայի հոտ եմ առնում:

ՄՀԵՐ - Ճիշտն ասած ես ծեծված բան չեմ սիրում, անասուն լինի, թե մարդ: Բայց բան չխմեցինք: Էսքան լուրջ ո՞ւր գնամ:

ՍՈՒՍԱՆ - Վա՛յ, սպասեք, Արգամ Պետրովիչը դեռ չի ավարտել իր խոսքը:

ԱՐԳԱՄ - Համարյա թե ավարտել եմ, Սուսան: Ուզում էի ավելացնել միայն… Միանգամից չասացի, որպեսզի հենց սկզբում չզցեմ ձեր տրամադրությունը... Բայց դե պահել ևս չի կարելի: Այսօր ինձ ազատեցին աշխատանքից, բարեկամներ:

ՎՌԱՄ - Ի՞նչ:

ԱՇՈՏ - Կատա՞կ եք անում, Արգամ Պետրովիչ:

ՄՈՒՔԱՅԵԼ - *(Հավի բուդը ձեռքին)* Հարևա՞ն, ախորժակ փակելու համար ես ասում:

ՍՈՒՍԱՆ - Դա ի՞նչ սև հումոր է:

ՄՀԵՐ - Հա, բայց ի՞նչ է պատահել, իրար խառնվեցիք: Հանել-հանել են, հետո՞...

ՀԱՍՄԻԿ - Հետաքրքիր մարդ ես, Արգամ, ինչո՞ւ ես զցում մարդկանց տրամադրությունը:

ՄԱՐԻԱՄ - Արգամ Պետրովիչ, ինչո՞ւ եք մեր հոգու հետ խաղում: Ասացեք, որ կատակում էիք: Չէ, չէ, ասացեք, որ կատակում էիք:

ԱՐԳԱՄ - Ես չեմ կատակում: Դա՞ ինչ կատակի թեմա է: Այսօր առավոտյան մինիստրն անձամբ ինձ ասաց, որ ազատված եմ աշխատանքից:

ՄՈՒՔԱՅԵԼ - Գուցե առա՞ջ են ուզում քաշել, հարևան:

ՄՀԵՐ -*(Ծիծաղելով)* Առաջ քաշելու հարց որ լիներ, հիմա տասը մարդ մաղարիչ էր ուզել Արգամ Պետրովիչից, հասկացնելով, թե ինքն է առաջքաշման գաղափարը տվել:

ՎՌԱՄ - Սպասեք, ընկերներ, այսպես ո՞նց կլինի: Արգամ Պետրովիչը խոշոր գիտնական է և հրաշալի դիրեկտոր: Գործարանը բոլոր գծերով կատարում է պետական առաջադրանքները: Երեք տարի է, ինչ հանրապետական փոխանցիկ կարմիր դրոշը մեր ձեռքին է: Այդքանից հետո դիրեկտոր են հանում: Ապօրինություն, ապօրինություն, հասկացանք: Բայց ա՞յս մակարդակով: Ես համոզված եմ, որ սա թյուրիմացություն է: Եթե մեր սիրելի Արգամ Պետրովիչը կատակում է, ապա սա շատ դաժան կատակ է: Իսկ եթե դուք, մեր թանկագին բարեկամ, չգիտես ինչու հանկարծ վճռել եք այս եղանակով մի անգամ ևս ստուգել մեր անկեղծությունն ու նվիրվածությունը ձեզ, ապա մի՞թե մենք արժանի ենք դրան: Ես իրավացի չե՞մ, ընկերներ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Ավելի պարզ հնարավո՞ր է ասել: Անպայման լա՞ց պետք է լինեմ, որ հավատաք: Իհարկե, ես կուզեի իմանալ, թե ի վերջո ինչի համար են ինձ ազատում աշխատանքից: Բայց որ չեն ասում՝ ի՞նչ անեմ:

ՎՌԱՄ - Ուրեմն չե՞ն ասել: Ինչո՞ւ, անտեր երկիր է ու մենք էլ որբե՞ր ենք: Ինչո՞ւ ոչ մեկը մեր կարծիքը չի հարցնում: Հսկայական գործարան է, կուսակցական, արհմիութենական կազմակերպություններ ունենք, ինչպե՞ս կարող են հաշվի չառնել մեր կարծիքը, վիթխարի կոլեկտիվի կարծիքը:

ՄՀԵՐ - Ժողովրդական մի լավ խոսք կա, ընկեր Վռամ, ասում է՝ երբ հովվին փոխում են, ո՞վ է ոչխարների կարծիքը հարցնում:

ԱՐԳԱՄ - Վերջ տվեք: Ինձ համար այս ամենը վիրավորական է:

ՄՈՒՔԱՅԵԼ - Ես մենակ մի բան գիտեմ: Էս տարիքի մարդ եմ, բայց հլա չեմ տեսել, որ փոփոխություններից մի լավ բան դուրս գա: Նոր եկողն անպայման ավելի վատն է եղել, քան առաջվանը: Բա դա իրենք չեն տեսնո՞ւմ, ինչի՞ են վռազ-վռազ փոխում մարդկանց...

(Շփոթահար լռություն: Եվ հանկարծ Մարիամը երգում է)

ՄԱՐԻԱՄ –

Մի լար, մի թացիր աչերդ,
Աչերիդ լույսն ափսոս է, կանցնի...

ԱՐԳԱՄ - Ապրես, Մարիամ: Ճիշտ նույն կարծիքի եմ: *(ծափահարում է)*

ՄՈՒՔԱՅԵԼ - Հարևան, բա քո տեղն ո՞ւմ են դնում:

ՄՀԵՐ - Տո քե՞զ ինչ, ընկեր Մուքայել… Քե՞զ ինչ, թե ով կլինի մեր նոր դիրեկտորը:

ՄՈՒՔԱՅԵԼ - Վա՞յ, բա չիմանանք, գոնե իրա նման արժանավորի են դնելու, թե պատահական հիմարի մեկին: Ո՞ւմ են նշանակելու, հարևան...

ԱՐԳԱՄ - *(Սրտնեղած)* Մի շատ արժանավոր մարդու, մեր սիրելի Վռամ Մաշուրյանին:

ՎՌԱՄ - Ո՞վ ասաց: Ո՞վ ասաց, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչը:

ՄՈՒՔԱՅԵԼ - Էդ Իվանիչը ո՞վ է:

ԱՐԳԱՄ - Մեր մինիստրը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄՀԵՐ - *(Բարձրանում, գլուխ է խոնարհում Վռամին)*

Այսուհետև ձեր խոսքերն ամենաիմաստունն են, Վռամ Մամբրեիչ, և ձեր կատակները՝ ամենասրամիտը: Շնորհավորում եմ ամբողջ սրտով և… խնդրում եմ հաշվի առնեք, որ աշխարհում առաջինը ես եմ խմում ձեր կենացը, որպես ծխախոտի «Արգիշտի» գործարանի նոր դիրեկտորի: Սա մեր հարաբերությունների մեջ նոր դարագլուխ բացող պատմական կենաց է: Ուռռա... *(խմում է)*

ՎՌԱՄ - Ծաղրածու: Որպես պատմական երևույթ ես առաջինը քո հարցով կզբաղվեմ…

ՄՀԵՐ - Շնորհակալություն: Ես արդեն ապահով եմ: Իմ պաշտոնն ամենահաստատունն է: Թագավորները գալիս գնում են, իսկ ծաղրածուն երբեք չի փոխվում: Ծաղրածուներ բոլորին են պետք: Կեցցեն ծաղրածուները: Ծաղրածուներ բոլոր երկրների, միացեք...

ՄՈՒՔԱՅԵԼ - Վ՛այ, էս տղեն իրա գլուխն ուտելու ա... Ախպեր, ես գոհ եմ, որ նոր դիրեկտորն էլի մեր շրջապատից ա… Շնորհավոր լինի, ընկեր Մաշուրյան... իմ և մեր կնկա կողմից...

ՎՌԱՄ - *(Զնացնելով, թե չի տեսնում նրա պարզած ձեռքը)* Արգամ Պետրովիչ, ես իհարկե հիմա էլ խորապես համոզված եմ, որ սա կամ թյուրիմացություն է, կամ ուզում են ձեզ ավելի պատվավոր աշխատանք առաջարկել: Կամ վճռել են, որ դուք միայն գիտությամբ զբաղվեք, հանուն գիտության: Ես միայն հավատացնում եմ ձեզ, որ ինչ էլ պատահի, ինչպես էլ դասավորվեն հանգամանքները, դուք մնում եք իմ ուսուցիչն ու պետը: Եվ մեր տան ցանկալի հյուրը:

ՄԱՐԻԱՄ - Ճիշտ է, սիրելիս...

ՍՈՒՍԱՆ - Վռամ Մամբրեիչ, դուք... դուք իսկական մարդ եք... Դուք ամեն ինչ հիանալի ասացիք: Մեր սրտից...

ՄՀԵՐ -Կներեք, Վռամ Մամբրեիչ: Ես այդպես չէի կարողանա... Ես ընկածներին չեմ սիրում:

ՎՌԱՄ - Հա, բայց ինչ է պատահել... Մարդ ենք, չէ՞: Աշոտ...

ԱՇՈՏ - Ի՞նչ է:

ՎՌԱՄ - Չլինեմ, չիմանամ, հա, Արգամ Պետրովիչին սովորականի պես առավոտյան գործարան ես բերում…

ՄՀԵՐ - Հա... Եվ դա համարիր նոր պետիդ առաջին կարգադրությունը:

ԱՇՈՏ - Չեմ կարող:

ՎՌԱՄ - Այսինքն ո՞նց թե չես կարող:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՇՈՏ - Չեմ ուզում: Ես հայտարարել եմ, չէ՞, որ Արգամ Պետրովիչից հետո ուրիշ պետ չեմ ունենալու: Հո նորություն չի:

ԱՐԳԱՄ - Պետք չէ, Աշոտ: Դա՞ ինչի համար է, վերջ տուր:

ՎՌԱՄ - Քեզ ինչ պատահեց: Իրար հետ կաշխատենք, էլի, այ տղա: Ի՞նչ տարբերություն:

ԱՇՈՏ - Որ տարբերություն չկա, ես էլ սրանից հետո բանջարեղեն եմ տեղափոխելու: *(Դուրս է նետվում)*:

ՎՌԱՄ - Տեսա՞ր դու... *(Դուրս են գալիս)*

ԱՐԳԱՄ - Վռամ, էդ ո՞ւր: Ինձ թվում էր, թե դու ամենավերջինը պիտի հեռանաս մեր տնից:

ՎՌԱՄ - Բարի օրինակ եմ ծառայում: Չե՞ք տեսնում, բոլորն ուզում են գնալ, բայց չեն համարձակվում:

ՄՈՒՔԱՅԵԼ - Վայ, ես էլ գնամ, մեր կնկան անտեր եմ թողել:

ՄՀԵՐ - Բ-բայց լավ խմեցինք... էս մնաց... *(Հեռանում են)*

ՏԵՍԱՐԱՆ

(Հասմիկը հավաքում է սեղանը, հետո հանկարծ իջնում է մի աթոռի ու լաց է լինում)

ԱՐԳԱՄ - Ինչո՞ւ ես լաց լինում: Ամաչո՞ւմ ես, որ ամուսնուդ հանել են աշխատանքից: Ի վերջո ո՞ւմ չեն հանում:

ՀԱՍՄԻԿ - Է՜հ...

ԱՐԳԱՄ - *(Ձեռքը դնում է կնոջ ուսին)* Հասմիկ, վերջ տուր, հա՞: Նախ՝ դեռ հայտնի չէ, թե ինչ է լինելու: Վերցնենք վատթարը... որ ինձ հեռացրել են աշխատանքից: Ի՞նչ է, կարծում ես չե՞նք կարողանա ապրել: Իսկի չլինի՝ նորից ինստիտուտ կվերադառնամ: Դու աշխատում ես, Նաիրուհին թոշակ է ստանում…

ՀԱՍՄԻԿ - Ուրեմն քո կարծիքով... քեզ թվում է, թե ես դժվարությունների՞ց եմ վախենում: Ինչքա՜ն անարդար ես, Արգամ:

ԱՐԳԱՄ - Դե ուրեմն էլ ինչո՞ւ ես լաց լինում...

ՀԱՍՄԻԿ - Մեղքս գալիս ես:

ԱՐԳԱՄ -Ե՞ս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՀԱՍՄԻԿ - Դու... դու այնքան ծանր ես տանում անարդարությունը... Սրտիդ այնքան մոտ ես ընդունում... Ցույց չես տալիս, բայց ես հո գիտեմ, թե ինչպես ես տառապում... Հազիվ ապրում էինք, էլի... Իսկ հիմա... Սիրտս ցավում է քեզ համար, Արգամ ջան: Ասա, ի՞նչ անեմ, ինչո՞վ օգնեմ քեզ...

ԱՐԳԱՄ - Ասեմ... Ամեն առավոտ ձվածեղ ես անում ու զոռով ուտեցնում ինձ:

ՀԱՍՄԻԿ - Մի ծաղրիր:

ԱՐԳԱՄ - Չեմ ծաղրում: Քաղցած մարդը խեղճ է լինում: Եվ եթե կարող ես, Հասմիկ ջան, այնպես դասավորի ամեն ինչ, որ ես ապահով զգամ տնից: Փողի մասին չմտածես, հենց նեղն ընկանք ավտոմեքենան կվաճառեմ: Լավ է, որ գոնե դա ունենք: Հասկացա՞ր ինձ; Պետք է, որ ես չանհանգստանամ ձեզ համար: Որովհետև կռիվներ են սկսվելու: Եվ շատ-շատ կարևոր է, որ ես թիկունք ունենամ: Հուսալի թիկունք:

ՀԱՍՄԻԿ - Այդ իմաստով կարող ես լրիվ ապահով համարել քեզ, Արգամ: Դիմացդ նայիր... *(Դուրս է գալիս)* Արգա՛մ...

ԱՐԳԱՄ - Լսում եմ:

ՀԱՍՄԻԿ - *(Զայնը)* Բոլորովի՞ն չես կռահում, թե ինչն է քո ազատման պատճառը: Որևէ այնպիսի բան չե՞ս արել, որ հանկարծ վերևներում դուր չգա...

ԱՐԳԱՄ - Չէ, ի՞նչ ես ասում: Ի՞նչ պետք է անեի, որ վերևներում... *(մեկուսի)* վերևներում... վերևներում... վերևներում... Զեկուցագիրը: Ոչ մի կասկած՝ սա իմ զեկուցագրի արձագանքն է: Եվ ինչպե՞ս մինչև հիմա մտքովս չէր անցնում: Դե իհարկե, զեկուցագիրն է: Թշվառական, ամբողջ մինիստրության, ձեռնարկությունների վերակառուցման ծրագիր ես առաջարկում, հազար ու մի տեսակ հարցեր բարձրացնում: Երևի ինչպես դու վարվեցիր քո վարորդ Գրիգորի հետ, որը կադրերի տեղաբաշխման տարբերակներ էր մշակում, այնպես էլ վերևում են վճռել վարվել քեզ հետ: Ավելի հեշտ չէ՞ միանգամից քո հարցը լուծել, քան թե առաջարկած պրոբլեմները, որոնց ընթերցանությունից անգամ մեկ ամիս առաջ նախկին սարիթաղցի Սամսոն Իվանիչի գլուխը պտտվեց:

ՏԵՍԱՐԱՆ

(Լուսավորվում է մի անկյուն: Մինիստրի առանձնասենյակը: Մինիստրը թերթում է բազմաէջ զեկուցագիրը, կարդում իր ընդգծումները, հեգնանքով նայում Արգամին)

ՄԻՆԻՍՏՐ - Հետո՞: Արա դու հո երեխա չես:

ԱՐԳԱՄ - Ինչո՞ւ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԻՆԻՍՏՐ - Լավ, ասենք թե, դու առաջարկեցիր, էս բոլորն ո՞վ է անելու, է:

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ, դուք էլ գիտեք, որ մեծ փոփոխություններ են սպասվում: Եթե կուսակցությունն ու կառավարությունը ամբողջ ժողովրդին, մեծից փոքր առաջարկում են մտածել, նոր ձևեր փնտրել, հայտնաբերել ու օգտագործել պահեստային բոլոր ուժերը, մե՞նք ինչու պետք է մի կողմ քաշվենք: Հազիվ հնարավորություն է տրվում ինքնուրույն վճիռներ կայացնելու…

ՄԻՆԻՍՏՐ - Լսիր, դու հո մտադիր չե՞ս թերթի առաջաբանը ծայրից ծայր կարդալ: Բան ու գործներս ի՞նչ է, մենք էլ ենք կարդում: Դու էդ բոլորից գլխի չե՞ս ընկնում, որ պետությունը ոչ մի մտադրություն չունի մեզ հավելյալ միջոցներ ու ֆոնդեր տրամադրելու:

ԱՐԳԱՄ - Որտեղի՞ց տա, Սամսոն Իվանիչ... Մենք ի՞նչ ենք տալիս, որ պետությունն էլ մեզ տա:

ՄԻՆԻՍՏՐ - Բա էլ ի՞նչ միջոցներով ես մտադիր իրականացնել այդ վերակառուցումը:

ԱՐԳԱՄ - Ես ամեն ինչ մանրամասն գրել եմ:

ՄԻՆԻՍՏՐ - Տո ի՞նչ ես գրել, է... Գրելով որ լիներ, հիմա մենք անցել էինք կոմունիզմից: Լավ գրում ենք:

(Սովորության համաձայն ձգում է պիջակի ձախ թևքը, որպեսզի դաստակի դաջվածքը թաքցնի)

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ... Ես արմատական փոփոխություններ եմ առաջարկում: Ես գտնում եմ, որ արտադրամասում աշխատող յուրաքանչյուր բանվոր, վարպետ ու ինժեներ գործարանի ընդհանուր եկամուտի փայատերը պետք է դառնա: Նա անձնական շահագրգռվածություն պետք է ունենա վերջնական արդյունքի համար: Նա պետք է առաջին հերթին նյութականով համոզվի, որ եթե իր ընկերը վատ է աշխատում, կամ ասենք սիգարեթ է գողանում, իր գրպանից է տանում:

ՄԻՆԻՍՏՐ - *(Բարձրանում է)* Հա, ի դեպ գողության մասին: Էս ինչե՞ր ես գրել, այ տղա: Բաց-բաց զեկուցագիր ես կազմում ու մեջն էլ հպարտությամբ գրում, թե աչք ենք փակում... ավելի ճիշտ թույլ ենք տալիս, որ ամեն մի աշխատող տուն գնալիս հետը երկու տուփ սիգարեթ տանի:

ԱՐԳԱՄ - Այո, փաստորեն թույլ եմ տալիս... Եվ դուք էլ գիտեք, որ այդպես է :

ՄԻՆԻՍՏՐ - Ես ոչինչ չգիտեմ: Լսո՞ւմ ես, ես ոչինչ չգիտեմ: Եթե իմանայի ամենայն խստությամբ կպատժեի քեզ:

ԱՐԳԱՄ - Ասենք թե պատժեցիք: Դրությունը կփոխվի՞, Սամսոն Իվանիչ: Իմ աշխատանքի ընթացքում առնվազն տասն անգամ ինձ թույլ եմ տվել անձամբ կանգնել ելքի մոտ և

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

խուզարկել դուրս եկողներին: Մեկ առ մեկ: Եվ պարզվել է, որ փրկել եմ մոտ երկու հազար տուփ սիգարեթ:

ՄԻՆԻՍՏՐ - Մի օրում երկու հազար տո՞ւփ:

ԱՐԳԱՄ - Երկու հազար: Իհարկե չէի կարող ֆաբրիկան փակել ու հեռացնել բոլորին: Հեռացրեցինք մի քանի հոգու, որոնք փորձել էին շատ դուրս բերել: Երեսուն-քառասուն հոգու էլ տարբեր տույժերի ենթարկեցինք: Արդյու՞նքը: Արդյունքը եղավ այն, որ մի քանի հոսքային գիծ դուրս եկան շարքից, որ սիգարեթների որակը անմիջապես ընկավ, սիգարեթների միջից սկսեցին հայտնաբերվել հազար ու մի տեսակ առարկաներ...

ՄԻՆԻՍՏՐ - Բայց դա սաբոտաժ է: Դրա համար դատ է հասնում: Արա, դրանք վախ չունե՞ն:

ԱՐԳԱՄ - Չէ:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ որտե՞ղ են ձեր կազմակերպությունները, ժողովրդական վերահսկիչները, «Լուսարձակը»...

ԱՐԳԱՄ - Գրեթե բոլորի գրպաններում սիգարեթներ հայտնաբերեցինք:

ՄԻՆԻՍՏՐ - Ուրեմն վատ եք աշխատում, հեղինակություն չունեք, ընկեր դիրեկտոր: Ուրեմն դա ձեր տեղը չէ: Նամուս ունեցեք, դիմում տվեք, գնացեք գործ գտեք ձեզ համար: *(Զգում է թևքը)*:

ԱՐԳԱՄ - Մտածում եմ: Իմ զեկուցագիրը հենց դրա արդյունքն է: Ես ուզում եմ մեկընդմիշտ փակել գողությունների ճանապարհը և ուզում եմ, որ հենց իրենք՝ գողացողները շահագրգռված լինեն փակելու այդ ճանապարհը:

ՄԻՆԻՍՏՐ - *(Թևքը ձգելով)* Էդ ո՞նց, է՛, ո՞նց...

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ, ենթադրենք, թե փակեցինք մեր աչքերը, աշխարհը կփոխվի՞: Ասենք ձևացրինք, թե մեզ մոտ գողություն չկա, գողությունները կդադարե՞ն: Իր ստեղծման օրվանից հացի գործարանի աշխատողները տուն գնալիս ամենաքիչը երկու հաց դնում են թևի տակ ու դուրս գալիս: Նույնը պահածոների գործարանում, նույնը կարամելի ֆաբրիկայում, նույնը՝ մսի կոմբինատում: Փորձե՞լ են արգելել նրանց: Հազար անգամ: Իսկ հետո ստիպված են եղել, ինչպես մեզ մոտ, նույնքան անգամ աչք փակել այդ գողությունների վրա, որովհետև ինչպես մեզ մոտ, այդ պայքարից վնասն ավելի մեծ է եղել, քան օգուտը: Ուրեմն ուրիշ ելք է հարկավոր...

ՄԻՆԻՍՏՐ - Ի՞նչ ելք: Մարդկանց հետ քաղաքական գաղափարական, բարոյական-դաստիարակչական աշխատանքներ չեք տանում: Անհատական մոտեցում չունեք: Մինչև նրանց գիտակցությանը չհասցնեք, որ գողությունը չարիք է և նրանց դեպի կործանումն է տանում...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - *(Հոգնած)* Մինչև նրանք շոշափելով չհամոզվեն, որ գործարանի տերերն իրենք են, որ գործարանի վնասի դեպքում իրենք են տուժում և օգուտը՝ իրենց օգուտն է, բան դուրս չի գա, Սամսոն Իվանիչ: Իսկ դրանից հետո, համոզված եղեք, նրանք ամեն ինչ կանեն՝ իրենք կբարձրացնեն արտադրողականությունը, իրենք կհետևեն որակին, իրենք կհսկեն, որ ոչ մի պտղունց ծխախոտ չկորչի: Ուրիշ ձևով նրանց ձեռքերը բռնել չես կարող: Հիմա նրանք համաձայն կլինեն հրաժարվել աշխատավարձից, որն ի դեպ շատ ցածր է և չարիքի արմատը հենց դրա մեջ է, միայն թե չզրկվեն իրական եկամուտից՝ իրենց երկու-երեք տուփ գողացած սիգարեթից: Ես կոնկրետ հաշվարկներ եմ կատարել...

ՄԻՆԻՍՏՐ - Վերջացնենք, ընկեր Մանասյան: Ես ֆանտազիայով չեմ կարող ապահովել պետական առաջադրանքների կատարումը: Ես քո այս զեկուցագիրը չեմ տեսել, պա՞րզ է: Որովհետև եթե քննության դնեմ՝ քեզանից ինչպես ասում են, թաց տեղ կմնա միայն: Պա՞րզ է: Քո առաջարկությունները բարեփոխություններ չեն: Դու հիմքերին ես ձեռք տալիս: Իսկ դա վտանգավոր բան է, ընկեր Մանասյան, շատ վտանգավոր:

ԱՐԳԱՄ - Այդ դեպքում թույլ տվեք զեկուցագիրն ուղարկել կենտկոմ և մինիստրների խորհուրդ:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ եթե թույլ չտա՞մ:

ԱՐԳԱՄ - Միևնույն է, կուղարկեմ, Սամսոն Իվանիչ:

ՄԻՆԻՍՏՐ - Ես ձեռքերս լվանում եմ: Ես որևէ տեղեկություն չունեմ: Միայն թե երբ օրը գա, կհիշես, որ ես զգուշացնում էի քեզ:

(Լույսը մարում է)

ՏԵՍԱՐԱՆ

(Արգամի տունը)

ԱՐԳԱՄ - *(Զայնը)* Ահա ուրեմն, օրը եկել է...

(Հեռախոսի զանգ: Ցնցվում է, վերցնում է լսափողը: Բեմի մի անկյունում հայտնվում է Վռամ Մաշուրյանը՝ լսափողը ձեռքին)

ՎՌԱՄ - Արգամ Պետրովիչ, ներեցեք, խնդրում եմ: Վռամն է: Քնած հո չէիք:

ԱՐԳԱՄ - Չէ, ինչ քնել…

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎՌԱՄ - Ես էլ չեմ կարողանում քնել... Մտածում եմ... Ու կարծես թե գտա: Իմ կարծիքով պատճառը ձեր զեկուցագիրն է:

ԱՐԳԱՄ - Ես էլ եմ այդպես մտածում:

ՎՌԱՄ - Ախր ես ձեզ ասում էի, չէ՞: Ես ձեզ ասում էի, չէ՞, որ գործ չունեք: Մարդիկ սովորել, հարմարվել են իրենց վիճակին, հանգիստ ապրում են: Հե՞շտ է նրանց տեղից շարժելը, ստիպելը, որ հիմա ուրիշ տեսակ մտածեն: Այդ վերակառուցումներն ովքեր պետք է անեն, ովքեր քեզ պետք է ղեկավարեն, պաշտոնյա մարդիկ, չէ՞: Իսկ պաշտոնյա մարդիկ ի՞նչ չունեն, որ վերակառուցումը պետք է տա նրանց: Ինչո՞ւ պետք է տանջվեն: Ձեր արածը լուրջ բան չէր, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Դեռ աքլորը չի կանչել: Մե՛կ:

ՎՌԱՄ - Ի՞նչ աքլոր:

ԱՐԳԱՄ - Աստվածաշնչի: Երբ Պետրոս առաքյալը հավատարմության երդումներ է տալիս Քրիստոսին, Քրիստոսն ասում է՝ մի երդվիր, որովհետև մինչև աքլորը կանչի, դու երիցս կուրանաս ինձ:

ՎՌԱՄ - Եղա՞վ, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Եղավ: Միթե՞ դու չէիր, Վռամ Մաշուրյան, որ հիացած էիր այդ զեկուցագրով: Միթե՞ դու չէիր ասում, թե դա հեղափոխություն է մեր բնագավառում:

ՎՌԱՄ - Չէ, չէ, Արգամ Պետրովիչ: Սկզբում, ճիշտ է, հավանում էի, բայց երբ խորացա էության մեջ... Դուք էլ պետք է հիշեք, ես համաձայն չէի:

ԱՐԳԱՄ - Երկու: Ես հիշում եմ, որ դու էլ էիր ուզում ստորագրել զեկուցագրի տակ: Այն ժամանակ ես պարզապես խնայեցի քեզ:

ՎՌԱՄ - Դե որ այդպես է՝ ճիշտը կասեմ: Դու՛, սիրելի ընկեր Արգամ, չէիր ուզում, որ իմ ստորագրությունը հայտնվի զեկուցագրի տակ: Եվ ոչ թե այն պատճառով, որ խնայում էիր ինձ, այլ որովհետև միամտաբար կարծում էիր, թե քեզ անմիջապես հերոսի կոչում կտան: Եվ չէիր ուզում դափնիներդ կիսել ինձ հետ: Ահա՛ ճշմարտությունը: Ու քանի որ դափնիներդ չէիր ուզում կիսել ինձ հետ, հիմա ես հիմա՞ր եմ, որ պատիժ կիսեմ:

ԱՐԳԱՄ - Երեք... *(Անջատում է հեռախոսը)* երեք... նույնիսկ «դու»-ով սկսեց խոսել ինձ հետ: Մի՞թե աշխարհում ոչ մի բան չի փոխվել երկու հազար տարիների ընթացքում: Ասենք չէ, ինչո՞ւ չի փոխվել, հիմա աքաղաղ չի մնացել, որ կանչի:

(ծածկոցը գցում է վրան ու մեկնվում բազմոցին: Տրորվում է, չի կարողանում քնել: Լսվում է ձայնը):

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

Զեկուցագիրն է, իհարկե զեկուցագիրն է պատճառը: Ինչպես երևում է, ազդեցիկ ինչ-որ մեկին դուր չի եկել այն: Եվ այդ ինչ-որ մեկը Մակեդոնացու նման վճռել է Գորդյան հանգույցը սրով կտրել: Ու նույնիսկ հարկ չի համարել կանչել, լսել ինձ: Բայց ո՞վ կարող է լինել այդ մեկը, որի ցուցումը կատարում են վայրկենապես, դետեկտիվի նման խորհրդավոր և մութ հանգամանքներում, աշխատանքից մեկուսացնում են մարդուն, առանց ասելու, թե որ մեղքի համար: Նույնիսկ մինիստրն է երդվում, թե տեղյակ չէ: Հնարավո՞ր բան է դա:

ՏԵՍԱՐԱՆ

(Լուսավորվում է մյուս անկյունը: Կենտկոմի քարտուղարի առանձնասենյակը: Խորասուզված է ինչ-որ թղթերի մեջ: Կարդում, վերջացնում է, մի կողմ է դնում: Նայում է թղթերին՝ մտազբաղ ու մռայլ: Մեղմում է ինչ-որ կոճակ)

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ինձ մոտ եկ, ընկեր Գուլանյան:

(Բարձրանում է տեղից, քայլում է մտազբաղ: Հայտնվում է Գուլանյանը)

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Բարև ձեզ, Տիգրան Արշակիչ:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ընկեր արդյունաբերության բաժնի վարիչ, ի՞նչ կարծիք ունես «Արգիշտի» ծխախոտի գործարանի դիրեկտոր… *(մոտենում է սեղանին, կարդում է)* Արգամ Պետրոսի Մանասյանի մասին:

ԳՈՒԼԱՆՑԱՆ - *(Լարվում է)* Մանասյանի՞... Կարծես թե իր տեղում է, ընկեր Ալթունյան... Թեև ասում են...

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ի՞նչ են ասում...

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Մի երկու ահազանգ կա... կհանձնարարեմ ճշտել... Սամսոն Իվանիչը...

ՔԱՐՏՈՒՂԱՐ- Ձեր կարծիքն ասեք, ընկեր Գուլանյան: Սամսոն Իվանիչին հանգիստ թող... Ես նրա հետ առանձին խոսակցություն ունեմ...

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Տիգրան Արշակիչ... միանգամից ինչպե՞ս ասեմ... Իմ կարծիքով, որքան ինձ թվում է... առայժմ իր տեղում է... Մինչև տեսնենք:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Իսկ ես ասում եմ, որ նա իր տեղում չէ... Դա ի՞նչ նրա տեղն է , ընկեր Գուլանյան...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Նայում է կծկված բաժնի վարիչին, ուզում է ինչ-որ բան ասել, հետո թափ է տալիս ձեռքը)
Լավ, հիմա ժամանակ չունեմ: Քոչում եմ Մոսկվա, սեսիայի: Այնտեղից էլ պատվիրակություն եմ տանելու Եթովպիա…

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Գիտենք, ընկեր Ալթունյան, բարի ճանապարհ եմ ցանկանում... Ի՞նչ անենք, չեք թողնում, որ ճանապարհ գցենք ձեզ...

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Կվերադառնամ մեկ ամիս հետո: Ուղիղ մեկ ամիս հետո պետք է իմ սեղանին լինեն Արգամ Մանասյանի վերաբերյալ բոլոր նյութերը: Հասկացա՞ք:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Հասկացա, ընկեր Ալթունյան, կլինեն...

(Նետվում է դեպի դուռը, քարտուղարն ուզում է ինչ-որ բան ասել նրան, նույնիսկ ձեռքը զանգի կոճակին է տանում, բայց նույն պահին հնչում է ուղիղ կապի հեռախոսը: Լսափողը արագորեն վերցնում է, խոսում է ակնածանքով)

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ալթունյանն է... Լսում եմ... Թռչում եմ գիշերը...

ՏԵՍԱՐԱՆ

(Լուսավորվում է մյուս անկյունը: Մինիստրի առանձնասենյակը: Սամսոն Բաղալյանը խոսում է հեռախոսով)

ՄԻՆԻՍՏՐ - Ինչպես պայմանավորվել էինք: Ուրեմն հաշվարկներն են սխալ եղել: Նորից ստուգեք: Ոչ մի զիջում: Ոչ մի հաշվի առնել: Իմ վիճակը ոչ ոք հաշվի չի առնում: *(Ցած է դնում լսափողը, վերցնում անընդհատ զնգացող մյուս սարքի լսափողը)* Բաղալյանն է: Լսում եմ, Ծատուր Եգորիչ…

(Բեմի մի կողմում հայտնվում է Գուլանյանը)

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Սամսոն Իվանիչ, «Արգիշտի» ծխախոտի գործարանի դիրեկտորի վիճակը լավ չէ՞:

ՄԻՆԻՍՏՐ - Ի՞նչ իմաստով, Ծատուր Եգորիչ:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Նոր մոտն էի... Շատ բարկացած էր: Ասաց, որ իր կարծիքով Արգամ Մանասյանն իր տեղում չէ: Երկու անգամ կրկնեց: Դա նրա տեղը չէ, ասաց: Հետո էլ, թե մի ամիս հետո նրա վերաբերյալ բոլոր նյութերը կդնես իմ սեղանին: Լսո՞ւմ ես:

ՄԻՆԻՍՏՐ - Լսում եմ, լսում: Սեղանին թղթեր չկայի՞ն:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Աչքովս ընկավ, որ ինչ-որ զեկուցագիր էր...

ՄԻՆԻՍՏՐ - Այդ է, որ կա: Ես նրան զգուշացրի, գիտե՞ք: Ա՛յ տղա, ասացի, ի՞նչ գործ ունես, որ անցավ գլուխդ ցավի տակ ես դնում:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Իսկ դու զեկուցագրին ծանո՞թ ես, Սամսոն Իվանիչ:

ՄԻՆԻՍՏՐ - Չէ: Այսպես ասած՝ ընդհանուր գծերով: Որքան հասկացա՝ միամիտ ցնդաբանություն է:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Ուրեմն դա է պատճառը: Շատ բարկացած էր: Հիմա ինչ անենք, Իվանիչ:

ՄԻՆԻՍՏՐ - Ինչ ասեք՝ կանենք... Բայց լավ տղա է, գիտեք:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Մենք բոլորս էլ լավ տղաներ ենք, Սամսոն Իվանիչ: Իսկ դու գիտե՞ս, որ այդ լավ տղայի մասին ինձ մոտ մի նամակ կա: Մեջտեղ չէի հանում, որովհետև քո անունն էլ էր շոշափվում: Բայց հիմա ուրիշ ելք չունեմ:

ՄԻՆԻՍՏՐ - *(Ակամա բացում է դարակներից մեկը, նայում)* Այդ ի՞նչ նամակ է:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Անստորագիր:

ՄԻՆԻՍՏՐ - Կոնկրետ փաստեր կա՞ն:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Բոլորը կոնկրետ փաստեր են: Եվ կոնկրետներից մեկն էլ այն է, որ երբ Եվրոպայի շուրջը ճամփորդել եք միասին, ինքն է վճարել քո և քո տիկնոջ ուղեգրերի արժեքը:

ՄԻՆԻՍՏՐ - *(Նորից բացում է դարակը, օրորում գլուխը)* Բացարձակ զրպարտություն է: Միթե ես թույլ կտայի: Ինչ ձևով ուզում եք ստուգեք փաստը:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Պիտի քննենք, բա ի՞նչ պետք է անենք: Հիմա արդեն ամեն ինչ պիտի քննենք, Սամսոն Իվանիչ: Փաստի առաջ ենք կանգնած: Մի ամիս հետո հո ինձ չեմ դնելու ընկեր Ալթունյանի զոհասեղանին: Գուցե դու էլ քո հերթին ֆաբրիկայում ստուգումներ անցկացնես:

ՄԻՆԻՍՏՐ - Բայց եթե այնտեղ իմ մասին էլ խոսք կա, որքա՞ն հարմար է:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Առավել ևս: Հենց դրանով էլ կապացուցես, որ ոչ մի կապ չես ունեցել այդ պատմության հետ և չկա որևէ հանգամանք, որ քեզ հարկադրի կորցնել օբյեկտիվությունը:

ՄԻՆԻՍՏՐ - Արա, բայց շատ հիմար բան է ստացվում: Մի շաբաթ առաջ գովեցինք մեզ մոտ, երկինք հանեցինք գործարանի ցուցանիշները... Հիմա էդ մարդը ո՞նց կընդունի հանձնաժողովին...

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Սամսոն Իվանիչ, ճիշտ կլինի մեկուսացնել նրան:

ՄԻՆԻՍՏՐ - Ո՞նց...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Շատ պարզ: Քարտուղարը հստակ ու որոշակի ասաց, որ գործարանը նրա տեղը չէ: Եթե այդպես է, գա թե չէ՝ հեռացնելու է աշխատանքից: Ուրեմն ինչու նախաձեռնությունը մեր ձեռքը չվերցնենք: Նա անպայման կգնահատի մեր նրբանկատությունը: Համոզված եղիր:

ՄԻՆԻՍՏՐ - Հա, բայց անունն ի՞նչ դնենք: Ձեռքներիս տակ հիմա ոչ մի հիմք չկա:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - *(ծիծաղում է)* Շուտով այնքան հիմքեր կլինեն, որ չես իմանա ինչ անես: Կարևորն այն է, որ ժամանակին գործի գցենք մեքենան: Դրանից հետո ինքն իրեն կգնա:

ՄԻՆԻՍՏՐ- Հա, բայց հիմա...

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Իսկ հիմա ասա, որ քեզ կարգադրել են նրան թողնել մինիստրության տրամադրության տակ, մինչև որ հանձնաժողովը կամփոփի արդյունքները:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ եթե փորձի բողոքե՞լ: Եթե հարցնի՝ ում կարգադրությունն է, ի՞նչ ասեմ:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Է՜հ, Սամսոն, Սամսոն... Մի ժամանակ կրակ էիր, դիմացդ կանգնել չէր լինում: Քեզ ինչ է պատահել: Շատ զգույշ ես դարձել:

ՄԻՆԻՍՏՐ - Տո էն ժամանակ ջահել էի, բարձրանում էի, սուրս աջ էլ էր կտրում ձախ էլ: Իսկ հիմա տեսնում եք, էլի, քանի տարի է մի տեղում նստած եմ:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Ուրախացիր, որ նստած ես, ընկնելն ավելի վատ է: Զգույշ մնա, որ Մանասյանը քեզ չտանի իր հետ: Գործ արա, գործ, Սամսոն:

ՄԻՆԻՍՏՐ- Համա թե հումոր ունեք... *(երեք անգամ թիկթիկացնում է լսափողին)* Սատանի ականջը խուլ: Ինչ պետք է՝ կանեմ: Լավ, լավ, ամեն ինչ կվերցնեմ ինձ վրա:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Այ դա եղավ...

(Մինիստրը ցած է դնում լսափողը: Հառաչում է:)

ՏԵՍԱՐԱՆ

(Առավոտ է: Արգամ Մանասյանի տանը: Արգամը բարձրանում է բազմոցից ու կրկին սկսում է քայլել մտահոգ, գլուխը բռնած: Դռան զանգ: Ցնցվում է, քայլում է դեպի դուռը, դիմացից հայտնվում են Աշոտն ու Հասմիկը):

ԱՇՈՏ - Բարի լույս, Արգամ Պետրովիչ: Ես ներքևում սպասում եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Աշո՞տ... Բա ասում էիր, թե այդ մեքենան այլևս չես նստի:

ԱՇՈՏ - Ձեր «Վոլգայով» եմ, Արգամ Պետրովիչ: Բանալիներն իմ ձեռքին էին, չէ՞:

ԱՐԳԱՄ - Հա՞, կեցցես... դե ուրեմն գնացինք:

ՀԱՍՄԻԿ - Ի՞նչ, մինչև ձվածեղը չուտես, ոչ մի տեղ չես գնա:

ԱՐԳԱՄ - Այ կնիկ, հո ամեն ինչ բառացիորեն չեն հասկանում: Հիմա ես ոչ մի ախորժակ չունեմ:

ՀԱՍՄԻԿ - *(Բռնում է նրա ձեռքը, գլխով անում Աշոտին)*

Անմիջապես նստեք: Ամբողջ գիշեր չեմ քնել, վախեցել եմ, թե առավոտյան քնած կմնամ ու ձվածեղը չեմ հասցնի: Անմիջապես նստեք...

ՊԱՏԿԵՐ

ԱՇՈՏ - Արգամ Պետրովիչ, մի բան ասե՞մ:

ԱՐԳԱՄ - Ասա:

ԱՇՈՏ - Թույլ կտա՞ք հետաքրքրվեմ, թե ինչ է պատահել: Թե էդ ով և ինչի համար է ուզում ձեզ ժերտվա տալ:

ԱՐԳԱՄ - *(ժպտում է)* Ժերտվա տա՞լը որն է:

ԱՇՈՏ - Դե ոնց որ շախմատի մեջ, էլի, Արգամ Պետրովիչ: Մի ֆիգուր տալիս են, որ խաբեն ու ավելի մեծ օգուտ ստանան: Չջղայնանաք, բայց սիրտս տպում է, որ ձեր տեղը ծախել են:

ԱՐԳԱՄ - Ինչ են արե՞լ: Դա՞ ինչ հիմարություն է, Աշոտ:

ԱՇՈՏ - Մեկ է, ինչքան էլ ջղայնանաք, ես իմ իմացածն ասելու եմ: Հիմա ամեն պաշտոն իր գինն ունի, Արգամ Պետրովիչ... Ոնց որ շուկայում:

ԱՐԳԱՄ - Եվ ուրեմն իմ պաշտոնի գինն ինչքա՞ն է:

ԱՇՈՏ - Չգիտեմ: Բայց մի քանի օր առաջ ընկերներիցս մեկը քսան հազար ռուբլի մեկ-մեկ հաշվեց, տվեց ու բաստուրմայի ցեխ առավ:

ԱՐԳԱՄ - Աշո՞տ... դու քո աչքո՞վ ես տեսել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՇՈՏ - Երեխաներիս արև: Փողերից էլ նավթալինի հոտ էր գալիս:

ԱՐԳԱՄ - Այսինքն՝ ո՞նց է գնում այդ ցեխը, ի՞նչ պիտի անի: Մասնագե՞տ է:

ԱՇՈՏ - Չէ՛ մի, ի՞նչ մասնագետ, Արգամ Պետրովիչ, մասնագետները աշխատում են, իսկ նա տերն է: Նրա անունն իսկի ռոճկացուցակում էլ չի լինում: Կամ էլ ձևակերպված է լինում որպես բանվոր, փականագործ, մեխանիկ: Որովհետև դրանք մեծ մասամբ դատված մարդիկ են, իրավունք չունեն նյութական պատասխանատու աշխատանք կատարել:

ԱՐԳԱՄ - Սարսափելի բաներ ես ասում, Աշոտ:

ԱՇՈՏ - Էդպես է, Արգամ Պետրովիչ, էդպես է: Ախր բանն էն է, որ էդ մարդիկ չեն էլ թաքցնում, հակառակը՝ գոռոզանում են: Մեկն էլ իմ հարևանն է: Համ տրիկոտաժի ցեխ ունի, համ էլ փայատեր է, իր տոկոսներն ունի հրուշակեղենի մի ցեխից ու մի խորտկարանից: Հիմա ասում եմ, թե գուցե ես իմանամ գաղտնիքը:

ԱՐԳԱՄ - Իսկ այդ ինչպե՞ս պիտի իմանաս:

ԱՇՈՏ - Արգամ Պետրովիչ, իզուր մեզ բանի տեղ չեք դնում: Էն, ինչ վարորդները գիտեն, ոչ մեկը չգիտի: Էն, ինչ վարորդներն են տեսնում.. Հնարավո՞ր բան է, որ պետը գաղտնիք ունենա ու վարորդը չիմանա էդ մասին:

ԱՐԳԱՄ - Եվ դու ուզում ես վարորդների միջոցով ճշտել:

ԱՇՈՏ - Հա, մենք էլ մեր միությունն ու մեր կանոնադրությունն ունենք...

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

(Գործարանի դիրեկտորի ընդունարանը: Աջ կողմում քարտուղարուհու սեղանը: Մի բանվոր պատի վրայից պոկում է «Ա. Պ. Մանասյան» բրոնզե տառերը, տեսնում է դիրեկտորին, տառերը ցած են թափվում):

ԲԱՆՎՈՐ - Բարև ձեզ, ընկեր Մանասյան:

ԱՐԳԱՄ - Բարև, Մուշեղ:

ԲԱՆՎՈՐ - Ինձ ասացին, որ տառերը պետք է փոխել:

ԱՐԳԱՄ - Իհարկե, Մուշեղ, իհարկե...

ԲԱՆՎՈՐ - Բայց իմացեք, որ սա իմ սրտովը չի, այ, ու ոչ մեկի սրտովը չի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Ամեն ինչ ճիշտ է... շնորհակալություն, Մուշեղ:

(Բանվորը դուրս է գալիս: Բացվում է ձախ կողմի դուռը, հայտնվում է Սուսանը: Շփոթվում է, դառնում է բաց դռան կողմը)

ՍՈՒՍԱՆ - Վռամ Մամբրեիչ, Արգամ Պետրովիչն է եկել: Բարև ձեզ, Արգամ Պետրովիչ:

ՎՌԱՄ - *(Հայտնվում է)* Վա՞յ, ինչու ներս չես գալիս, Արգամ Պետրովիչ... *(նայում է նրա հայացքի ուղղությամբ, պատին)* Ազգանունդ որոշեցի հանել: Չարժե, որ ազգանունդ դռան վրա փակցված լինի, երբ ներսում հանձնաժողով է աշխատում:

ԱՐԳԱՄ - Ի՞նչ հանձնաժողով:

ՎՌԱՄ - Ի՞նչ իմանամ, մինիստրությունից են ուղարկել:

ԱՐԳԱՄ - Բայց ի՞նչ են ստուգում:

ՎՌԱՄ - Դեռ նոր են հավաքվել: Երևի նոր են որոշում, թե ինչից սկսեն:

ԱՐԳԱՄ - Եվ մտադիր են սկսել առանց ինձ հետ խորհրդակցելու՞:

ՎՌԱՄ - Հարցրեցի: Չինարյանն ասաց՝ հենց որ պետք լինի կհրավիրենք... Հա, ասաց, խորհուրդ ենք տալիս, որ չբացակայի քաղաքից...

ՍՈՒՍԱՆ - Սուրճ պատրաստեմ ձեզ համար:

ՎՌԱՄ - Դիր, Սուսիկ ջան:

ԱՐԳԱՄ - Ես չեմ ուզում... *(Քայլում է դեպի իր առանձնասենյակը, Սուսանը կանգնում է նրա դիմաց)*

ՍՈՒՍԱՆ - Արգամ Պետրովիչ, ներեցեք ինձ, ի սեր աստծո, բայց կարգադրել են ոչ ոքի ներս չթողնել:

ԱՐԳԱՄ - Ինձ և՞ս...

ՍՈՒՍԱՆ - Դուռը փակել են ներսից... *(Հեռախոսի զանգ)* Վռամ Մամբրեիչ ձեզ են ուզում... *(Մեկնում է լսափողը)*:

ՎՌԱՄ - Բարև: Այդ երբ են «Ախթամարն» ու «Երևանը», խանութներում վաճառվել : Ծիծաղելի բաներ եք ասում: Արտադրում ենք այնքան չնչին քանակությամբ, որ հազիվ ենք հատուկ բազաներն ապահովում: Որտեղի՞ց, սիրելի ընկեր, ոչ հումք ունենք, ոչ տուփ: Իմ ձեռքին լիներ, ես ընդհանրապես կվերացնեի դրանց արտադրությունը: Որովհետև թշնամիներից բացի, ուրիշ ոչինչ չենք վաստակում: Ի՞նչ, բա ինչպես է, որ հարևան Ադրբեջանի շուկաներում ազատ դրվա՞ծ են: Որովհետև տուփը երեք ռուբլիով են

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

վաճառում: Գնացեք, բռնեք: Մե՞նք ենք բռնողը: Մենք վախենալու բան չունենք: Հարգանքներս:

ՍՈՒՍԱՆ - Վռամ Մամբրեիչ, ախր ձեզ այդքան հուզվել չի կարելի:

ՎՌԱՄ - Արգամ Պետրովիչ, ինձ սխալ չհասկանաս, բայց երանի քեզ, որ օձիքդ ազատում ես: Սա կյանք չէ: Մեր շրջանի ՕԲԽՍՍ-ի տեսուչն է: Մեկին խոսք է տվել ու ինձնից «Ախթամար» է ուզում: Ասում եմ՝ չունենք՝ մեր ֆաբրիկայից մեծ, հիմնական փորձարարական ծխախոտի գործարան կա, նրանցից ուզեք: Ասում է՝ նրանցից էլ եմ ուզել: Շատ է պետք: Ինչքան ուզել է, տվել եմ: Հիմա իրոք չկա, չի հավատում: Վախեցնում է սրիկան... Բա էդ ոնց է, որ Ղազախի և Նախիջևանի շուկաներում ազատ դրված են... Ես ի՞նչ իմանամ, դուք եք, որ ամեն տեղ հոտոտում եք: Հոտոտեք...

ԱՐԳԱՄ - Այս Չինարյանն ո՞վ է, Վռամ, ճանաչո՞ւմ ես:

ՎՌԱՄ - Չէ, բայց լսել եմ: Ուր գնա, պիտի մի բան սարքի: Որպես՝ «բոբոխ» են ուղարկում:

(Արգամը Սուսանի հեռախոսով համար է հավաքում)

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչին եմ խնդրում: Բա որտե՞ղ է: Մարինե ջան, ես եմ, Մանասյանը, չգիտե՞ս երբ կվերադառնա: Դե լավ, լավ...

ՎՌԱՄ - Արգամ Պետրովիչ, հա, չմոռանամ, քիչ առաջ զանգահարեցին, քեզ շրջանի դատախազությունում սպասում են:

ԱՐԳԱՄ - Որտե՞ղ: Ո՞վ է սպասում:

ՎՌԱՄ - Դատախազի օգնականը: Գաբրիելյան է ազգանունը:

ԱՐԳԱՄ - Ի՞նչ է ուզում: Գուցե էլի սիգարեթների պատմություն է:

ՎՌԱՄ -Չէ, Արգամ, ասաց՝ նամակ են ստացել:

ԱՐԳԱՄ - Նամա՞կ: Չգիտե՞ս ինչ է, ոչինչ չասա՞ց:

ՎՌԱՄ - Չէ ...

ԱՐԳԱՄ - *(Սկսում է քրքջալ)* Սա արդեն վարազի որս է հիշեցնում: Երբ շրջապատում են չորս կողմից...

ՍՈՒՍԱՆ - *(Հայտնվում է)* Վռամ Մամբրեիչ, սուրճը ձեր սեղանին է...

ՎՌԱՄ - Հիմա գալիս եմ, Սուսիկ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Վռամ, իսկ մեր աննիկոտին սիգարեթների արտադրության հարցը ի՞նչ պետք է անենք... Մի քանի օրվա գործ է մնացել ախր...

ՎՌԱՄ - Ի՞նչ... Հա... Բակուրն անում է, էլի... Թող վերջացնի, տեսնենք... *(նկատելով ներս մտնող Բակուրին)* Ըհը, անունը տուր... *(Գնում է իր սենյակը)*

ԲԱԿՈՒՐ - Բ-բարև, ընկեր Մանասյան: Էս-էս ի՞նչ են ասում...

ԱՐԳԱՄ - Ոչինչ, ոչինչ, Բակուր:

ԲԱԿՈՒՐ - Բա էս, էս...

ԱՐԳԱՄ - Ես էլ չեմ հասկանում: Հավատա, որ ոչինչ չգիտեմ ու չեմ հասկանում:

ԲԱԿՈՒՐ - Հո պատ-ճառը մ-մեր նոր արտադրանքը չէ:

ԱՐԳԱՄ - Չէ, չեմ կարծում:

ԲԱԿՈՒՐ - Ս-սիրտս շատ անհանգիստ է...

ԱՐԳԱՄ - Իհարկե, խոսակցություն կլինի... բայց դե կբացատրենք, կհասկանան, մարդ չե՞ն, ինչ է... Ե՞րբ կարող ես նմուշները ցույց տալ:

ԲԱԿՈՒՐ - Տասն օրից *(Ուսի վրայից թքում է)*

ԱՐԳԱՄ - Հասցրու, Բակուր ջան, հասցրու, ո՞վ գիտե, գուցե թե դա մեզ փրկի:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Դատախազի օգնականի փոքրիկ խուցը: Գրասեղանի ետևում հազիվ տեղավորված է Վարազդատ Գաբրիելյանը: Ամեն անգամ կռանում, տնքալով ոտքերի տակից «Ջերմուկի» շիշ է հանում ու խմում... գեր, ճարպակալած մարդ է):

ԱՐԳԱՄ - Բարև ձեզ, դուք ինձ հարցրե՞լ եք:

ՎԱՐԱԶԴԱՏ - Համա թե գալիս եք, հա... երեք օր առաջ եմ հարցրել: Քիչ էր մնում համամիութենական հետախուզում հայտարարեինք:

ԱՐԳԱՄ - Ի՞նչ է, բոլոր հանցագործներին բռնել եք ու միայն ե՞ս եմ մնացել:

ՎԱՐԱԶԴԱՏ - Նստեք, նստեք, կամաց - կամաց բռնում ենք... *(ջուր է խմում շշից: Արգամը մի կերպ տեղավորվում է աթոռին)*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Այս խցում նստելը նո՞ւյնպես մտնում է պատժաչափի մեջ:

ՎԱՐԱԶԴԱՏ - Ես ձեր փոխարեն հանաք չէի անի: Այսինքն՝ երևի թե ճիշտ եք անում, որովհետև հենց որ սկսեմ հարցեր տալ, էլ հանաքի տրամադրություն չեք ունենա:

ԱՐԳԱՄ - Եղավ: Տվեք ձեր հարցերը:

ՎԱՐԱԶԴԱՏ - *(Թղթապանակը մոտ է բերում, բացում)* Ուրեմն սկսենք: Արգամ Պետրոսի Մանասյան: Ծխախոտի «Արգիշտի» գործարանի դիրեկտոր:

ԱՐԳԱՄ - Նախկին:

ՎԱՐԱԶԴԱՏ - Գիտենք: Ես ձեզ դատախազություն եմ հրավիրել մի նամակի կապակցությամբ:

ԱՐԳԱՄ - Ո՞վ է գրել, կարելի է իմանալ:

ՎԱՐԱԶԴԱՏ - Կարելի է: Նամակն անստորագիր է:

ԱՐԳԱՄ - Անստորագի՞ր: Ինչպե՞ս թե անստորագիր: Դուք հեռուստացույց չե՞ք դիտում, ինչ է: Ձեր ղեկավարներից մեկը շատ որոշակիորեն հայտարարեց, որ այսուհետև ուշադրություն չպետք է դարձնել անստորագիր նամակներին:

ՎԱՐԱԶԴԱՏ - *(Քմծիծաղով)* Ղեկավարներից մեկն էսպես է ասում՝ մեկն էնպես: Համոզված չե՞ք, որ քաղաքի դատախազությունում ինձանից ու ձեզանից լավ կիմանան, թե ինչպես պիտի վարվեն այդ նամակների հետ:

ԱՐԳԱՄ - Ենթադրում եմ:

ՎԱՐԱԶԴԱՏ - Խնդրեմ, ահա ստորագրությունը, ահա և մակագրությունը:

(Հեռախոսի զանգ)

Հա, ջանս, հա, ցավդ տանեմ: Ո՞վ ասաց, մեռնեմ քեզ: Չէ, արևիդ մատաղ: Թող քո ասածը լինի, հոգիս: Մի ժամ հետո ո՞նց է: Մի թեթև գործ ունեմ: Լավ, լավ, ցավդ տանեմ: Դուրս եմ գալիս... Թռա...

(Ցած է դնում լսափողը)

ԱՐԳԱՄ - Քաղաքի դատախա՞զն էր: Ես խանգարեցի՞ ձեզ:

ՎԱՐԱԶԴԱՏ - Մեղքը ձերն է, շատ ուշացաք: Կարևոր գործ ունեմ: Ուրեմն՝ պայմանավորվենք այսպես: Ես ձեզ կթելադրեմ հարցերը, իսկ դուք բացատրություն կգրեք ու վաղը կբերեք ինձ: Պա՞րզ է: Դե, գրեք կետերը: Առաջինը՝ ճի՞շտ է, որ դուք գործարանի աշխատողներին թույլ եք տալիս սիգարեթներ գողանալ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Գիտեք ինչ...

ՎԱՐԱԶԴԱՏ - Մի ընդհատեք: Երկրորդ՝ ի՞նչ խնջույքներ եք կազմակերպել սույն թվականի փետրվարի 18-ին, 23 -ին, մայիսի 3-ին և ում հաշվին: Գրեցի՞ք: Ի՞նչ սեփականություն ունեք Ուջան գյուղում և ինչու է ձեր մայրը գրանցված և՛ այնտեղ, և՛ Երևանում:

ԱՐԳԱՄ - Սպասեք...

ՎԱՐԱԶԴԱՏ - Ժամանակ չունեմ: Ներկայացնել Թոխմախ գյուղի գերեզմանատանը թաղված ձեր հոր հուշարձանի բոլոր փաստաթղթերը: Գրեք, առարկությո՞ւն ունեք, էլի գրեք: Անձնական մտերմական ինչ փոխհարաբերությունների մեջ եք ձեր քարտուղարուհի Սուսան Մարտիկյանի և ձեր տեղակալի կնոջ՝ Մարիամ Մաշուրյանի հետ:

ԱՐԳԱՄ - Սա՞ ինչ ցնդաբանություն է: Ինչպե՞ս չեք ամաչում, որ կրկնում եք այդ անհեթեթությունները:

ՎԱՐԱԶԴԱՏ - Ինչո՞ւ պիտի ես ամաչեմ, ընկեր Մանասյան, անողը պիտի ամաչի: Ինձ չեն մեղադրում ընկերոջս կնոջ հետ կապված լինելու համար: Գրեք, գրեք: Անցած երկու տարում ինչքան գումար է վճարվել ձեր գործարանի նկարիչ Միհեր Սամսոնյանին և ինչ աշխատանքների համար: Յոթերրորդ...

ԱՐԳԱՄ - Ձեր այդ կետերն անսահմա՞ն են, ինչ է...

ՎԱՐԱԶԴԱՏ - Ի՞նչ միջոցներով է կազմակերպվել աննիկոտին ծխախոտի արտադրությունը: Որքա՞ն գումար է ծախսվել և որ բյուջեից:

ԱՐԳԱՄ - *(Բարձրանում է)* Ձեզ հանձնարարված գործը ինձ մի հանձնարարեք, ընկեր Գաբրիելյան: Ես ոչ արդարանալու և ոչ էլ ինքս ինձ խարակիրի անելու մտադրություն չունեմ:

ՎԱՐԱԶԴԱՏ - Ի՞նչ անելու, ինչ անելո՞ւ...

ԱՐԳԱՄ - Խարակիրի... Ճապոնացիներն այդպես են ինքնասպան լինում:

ՎԱՐԱԶԴԱՏ - Ես ճապոնացիների հետ գործ չունեմ, Մանասյան:

ԱՐԳԱՄ - Ընկեր, ընկեր Մանասյան:

ՎԱՐԱԶԴԱՏ - Եթե հրաժարվեք բացատրություն տալ և ստիպված ե՛ս մանրամասն քննեմ այս կետերը, ընկեր Մանասյան, վախենում եմ, թե բոլորովին ուրիշ տեսակ պիտի դիմեմ ձեզ:

ԱՐԳԱՄ - Իսկ եթե մանրամասն գրեմ՝ չե՞ք քննի:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՐԱԶԴԱՏ - Կքննեմ, բայց հաշվի կառնեմ ու կնշեմ, որ ինքներդ եք ազնվությամբ խոստովանել ձեր մեղքերը: Դա միշտ հաշվի ենք առնում:

ԱՐԳԱՄ - Իսկապե՞ս: Մի՞շտ...

ՎԱՐԱԶԴԱՏ - *(Ջուր խմելով)* Ուրեմն այսպես... Եթե բացատրություն գրեք, կգաք վաղը, ժամը տասներկուսին: Իսկ եթե չգրեք, մենք իրար կհանդիպենք ուղիղ մի շաբաթ հետո, և ես կարծում եմ, որ դա հարցաքննություն կլինի:

ԱՐԳԱՄ - Ցտեսություն: Ուշանում եք, ընկեր Գաբրիելյան...

(Հեռախոսը զնգում է: Օգնականը ուզում է վերցնել, հետո թափ է տալիս ձեռքը)

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

(Մինիստրի առանձնասենյակը)

ՄԻՆԻՍՏՐ - Եթե աշխատանքի հարցով եք եկել, ապա ոչ մի նորություն չունեմ:

ԱՐԳԱՄ - Ոչ, ոչ, ուրիշ հարց է, հինգ րոպեով, Սամսոն Իվանիչ:

ՄԻՆԻՍՏՐ - Ասեք:

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ, թե ինձ հետ ինչ կլինի, չգիտեմ և ի վերջո տեսնում եմ, որ դա որևէ մեկի համար նշանակություն չունի:

ՄԻՆԻՍՏՐ - Կարճ, Մանասյան, առանց զգացմունքների:

ԱՐԳԱՄ - Կարճ կասեմ: Միրտս ցավում է, որ տարիների մեր աշխատանքը ջուրն է թափվելու:

ՄԻՆԻՍՏՐ - Ի՞նչ աշխատանք:

ԱՐԳԱՄ - Աննիկոտին ծխախոտի արտադրությունը:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ որտե՞ղ է այդ ծխախոտը:

ԱՐԳԱՄ - Ես ձեզ զեկուցել եմ, ամեն ինչ պատրաստ է, Սամսոն Իվանիչ: Մնում են ձևականությունները: Դուք գիտեք, որ...

ՄԻՆԻՍՏՐ - Ես ոչինչ չգիտեմ, Մանասյան:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ, այստեղ մենք մենակ ենք, մեզ ոչ ոք չի լսում: Ինչո՞ւ եք վախենում: Թույլ տվեք վերջացնեմ, խնդրում եմ:

ՄԻՆԻՍՏՐ - Վերջացրու:

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ, աննիկոտին ծխախոտի առաջին պարտիան պատրաստ է և պահեստավորված: Պատրաստ են նաև փորձնական տուփերն ու պարկուճները: Հոսքային գծի վրա վերջին աշխատանքներն են կատարվում: Մի քանի օր առաջ խոսեցի լաբորատորիայի վարիչ Բակուր Եգանյանի հետ: Նա ասաց, որ տասն օրից կարող է փորձարկել գիծը: Այսօր տասներորդ օրն է:

ՄԻՆԻՍՏՐ - Հետո՞:

ԱՐԳԱՄ - Փաստորեն ինձ գործարան չեն թողնում: Ստուգող հանձնաժողովը չի կանչում ինձ, որպեսզի բացատրեմ իրերի իսկական վիճակը:

ՄԻՆԻՍՏՐ - Ի՞նչ պիտի բացատրես, Մանասյան:

ԱՐԳԱՄ - Բացատրեմ, որ դա մեծ գործ է: Որ աշխարհի շատ երկրներում գլուխ են կոտրում դրա վրա, բայց մեզ առաջինն է հաջողվել արդյունքի հասնել ու միաժամանակ հայտնեմ, թե ինչի համար ենք ստիպված եղել գաղտնի կազմակերպել այդ արտադրությունը: Ասեմ, որ կապիտալ ներդրումներ չենք ունեցել : Որովհետև գործին օտար, անծանոթ մարդը չի հասկանա: Նրանք միայն թղթերն են ստուգելու, իսկ այդ արտադրությունը ոչ մի թղթի վրա ձևակերպված չէ:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ դու ի՞նչ ես առաջարկում:

ԱՐԳԱՄ - Չեմ առաջարկում, խնդրում եմ՝ իբրև մեր հանրապետության ղեկավարներից մեկի, մեր մինիստրի, տեր կանգնել այս գործին: Հրաման տվեք օրինականացնելու աննիկոտին ծխախոտի արտադրությունը: Ինձ սխալ չհասկանաք, բայց մի օր ձեզ հիշելու են նաև նրանով, որ ձեր ղեկավարության օրոք է սկսվել այդ արտադրությունը: Հավատացեք և օգնեք: Թույլ տվեք գործարան մտնեմ, իսկ դուք երեք օր հետո ամբողջ կոլեգիայով եկեք հոսքային գծի բացմանը: Այդ աննիկոտին ծխախոտը հեղաշրջում է մտցնելու ծխախոտի արտադրության մեջ ընդհանրապես:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ հանձնաժողովին ի՞նչ ասենք: Հանձնաժողովը չի՞ ասի, թե հարգելի ընկերներ, ո՞ր օրենքով և ի՞նչ միջոցներով եք կազմակերպել այդ արտադրությունը: Չի՞ ասի, սիրելի բարեկամներ, գուցե ձեր մտքով անցնում է նաև ուղղաթիռների ցեխ բացել գործարանի մի անկյունում: Կամ գուցե արդեն բացե՞լ եք...

ԱՐԳԱՄ - Հրավիրեք նաև հանձնաժողովի անդամներին: Երբ նրանք իրենց աչքերով տեսնեն մեր նոր սիգարեթները, համոզված եղեք, որ...

ՄԻՆԻՍՏՐ - *(Նայում է նրա տառապած աչքերին)* Լավ... վերջացնենք:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ...

ՄԻՆԻՍՏՐ - Լավ: Կմտածենք:

ԱՐԳԱՄ - Հարկավոր է շտապել, Սամսոն Իվանիչ, քանի դեռ դատախազությունը ևս չի սկսել զբաղվել դրանով: Նրանց հասկացնելն ավելի դժվար կլինի:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ ի՞նչ է, դատախազությունն էլ է զբաղվում քո հարցով:

ԱՐԳԱՄ - Այո: Ինչ-որ նամակ ունեն... Բայց դա դատարկ բան է, հիմնականում զրպարտություններ են: Ես չեմ վախենում: Ճիշտ եմ ասում, ջուրն ընկնողը անձրևից չի վախենա:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ ես ջրից չեմ վախենում, Մանասյան, ես անձրևից եմ վախենում: Որովհետև անձրևը վերևից է գալիս...

ԱՐԳԱՄ - Սրամիտ էր, Սամսոն Իվանիչ:

ՄԻՆԻՍՏՐ - Լավ, այդ արտադրանքի հարցը կլուծենք:

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ... Ե՞րբ զանգահարեմ ձեզ...

ՄԻՆԻՍՏՐ - Երկու օր հետո...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՏԵՍԱՐԱՆ

(Արգամը խոսում է ավտոմատ հեռախոսով)

ԱՐԳԱՄ - Բարև, Մհեր:

ՄՀԵՐ - *(ձայնը)* Բարև Արգամ Պետրովիչ, ողջ ե՞ս:

ԱՐԳԱՄ - Էհ... մտքումդ բան ման չկա՞:

ՄՀԵՐ - Փող չունեմ:

ԱՐԳԱՄ - Ուրեմն ճի՞շտ է, որ իմ տված հավելյալ փողերով էիր ապրում: Առաջին անգամ եմ լսում, որ փող չունես:

ՄՀԵՐ -Չէ, ուղղակի այն ժամանակ դու դիրեկտոր էիր: Դիրեկտորին ո՞վ կասի, թե փող չունեմ քեզ հյուրասիրելու:

ԱՐԳԱՄ - Ես ունեմ: Գնա՞նք որևէ տեղ, թե մի քիչ բան-ման վերցնեմ գամ քո արվեստանոցը:

ՄՀԵՐ - Եկ, Արգամ Պետրովիչ...

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

(Մհերի արվեստանոցում)

ԱՐԳԱՄ - Ի՞նչ կա գործարանում, Մհեր:

ՄՀԵՐ - Ստուգումներ: Քրքրում են ամեն ինչ: Ինձ էլ կանչեցին, ինչո՞ւ է դիրեկտորը պարգևների մեծ մասը քեզ տվել:

ԱՐԳԱՄ - Դո՞ւ ինչ ասացիր:

ՄՀԵՐ - Ասացի՝ որովհետև ներկա վիճակում ես աշխարհի ամենամեծ նկարիչն եմ: *(ծիծաղում է)* Դրանց հետ ուրիշ տեսակ չպիտի խոսես: Հենց որ սկսեցիր մարդու տեղ դնել ու խոնարհել զլուխդ, տեղն ու տեղը կուտեն: Նրանց համար ախր ի՞նչ նշանակություն ունի, թե դու ով ես՝ գրող ես, նկարիչ ես, լուսանկարիչ ես, թե կոշկակար: Նրանք էլ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

իրենց պլաններն ունեն ու գործ են սարքում, գործ, առանց միջոցների մեջ խտրություն դնելու:

ԱՐԳԱՄ - Իսկ Վռամն ի՞նչ է անում: Ինչո՞ւ է թողնում, որ...

ՄՀԵՐ - Վռամ Մամբրեիչը առայժմ ի տեղի է, Արգամ, և ինչպես հայտնի է քեզ, շատ է ուզում դիրեկտոր դառնալ:

ԱՐԳԱՄ - Չի՞ հասկանում, որ եթե ծանրանա իմ մեղքերի նժարը, ինքն էլ որպես տեղակալ պատասխան պիտի տա:

ՄՀԵՐ - Երևի հասկանում է... Իմ կարծիքով նա ամեն ինչ հասկանում է, Արգամ:

(Միացնում է ռադիոն: Հնչում է Վաչե Հովսեփյանի դուդուկը)

ՄՀԵՐ - Ջան, ջան, ինչ դուդուկահար էր, է՜, Վաչե Հովսեփյան, ցավը տանեմ.. Եվ ինչ սիրուն երգեր գրեց... Հազա՛ր ափսոս... *(նվագի կողմը)* Կենացդ, ախպեր ջան և երանի քեզ, որովհետև թեև դու չկաս, բայց երգդ ու անուշ նվագդ, մեկ է, ապրում են: *(Խմում է)* Եվ կապրեն քանի դեռ աշխարհում հայ կա...

ԱՐԳԱՄ - Այս նվագը շատ է սազում «Օջախ» ռեստորանի հացատանը, չէ՞... Քարերը, հին կուժ ու կուլան, երկանքը, հասկերը...

ՄՀԵՐ - Վերջ տուր...

ԱՐԳԱՄ - Իսկ ինձ դուր է գալիս և բոլորին է դուր գալիս...

ՄՀԵՐ - Որովհետև դուք գեղացի եք: Ոչ թե գյուղացի, է՜, այլ գեղացի: Այսինքն ոչ թե ծնունդով, չէ, ծնունդը կապ չունի: Պուշկինն էլ էր գյուղացի և Թումանյանն էլ: Այլ մտածողությամբ: Դրա համար էլ սենտիմենտալ ես: Պահ-պահ-պա՜հ, տեսնում եք, հին կուժ է: Օհ, օհ, օ՜հ, քարերը տես ոնց են շարված, ինչպես Աշոտ Երկաթի օրոք: Բայց սուտ է, չէ՞, սուտ է, կարկատան է... Ես Զվարթնոցի հողի մեջ ընկած, մաշված մի քարը չեմ փոխի մեքենաներով տաշտշված ու իբր վերականգնված ամբողջ նոր Զվարթնոցի հետ: Որովհետև երբ նայում ես իր ծանրությունից կիսաթաղված քարին, ավելի շատ բան ես տեսնում, քան թե երևի նույնիսկ իրականում է եղել: Կենացդ: *(խմում է)*

ԱՐԳԱՄ - Հիմա մեզանից ո՞վ է սենտիմենտալը, ե՞ս թե դու...

ՄՀԵՐ - Դու, դու: Էն աղջիկը պտտվում էր չորս կողմդ, աչքերիդ էր նայում ու հոգոց հանում: Իսկ դու ոնց որ պատը: Ավելի ճիշտ՝ կեղծ բարեպաշտ էիր խաղում: Հա՛, աղջիկ ջան, իհա՛րկե բալիկ ջան... կենացդ:

ԱՐԳԱՄ - Ո՞վ:

ՄՀԵՐ - Սուսանը, ո՞վ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Սուսանը՞: Մեր քարտուղարուհի՞ն:

ՄՀԵՐ - Այո, հա՛, քո քարտուղարուհին: Երկու օրվա մեջ Վռամ Մաշուրյանի սիրուհին դարձավ:

ԱՐԳԱՄ - Ի՜նչ նողկալի բաներ ես ասում, Միեր: Սուսանը նրան երեխա կսազի:

ՄՀԵՐ - Բա որ ասում եմ՝ գեղացի ես:

ԱՐԳԱՄ - Սպասիր, բայց նա սիրած տղա ուներ:

ՄՀԵՐ - Մեկը մյուսին խանգարո՞ւմ է:

ԱՐԳԱՄ - Գուցե բամբասանք է, Միեր:

ՄՀԵՐ - Ի՞նչ ասեմ: Գուցե և բամբասանք է: Գուցե նրանք անցած երեկո այս արվեստանոցում երեք ժամ իմ կտավներով էին հիանում:

(Արգամը նստած է գլուխը բռնած, տառապում է)

Մի տափակ անեկդոտ կա: Շատ եմ սիրում: Ուշքս գնում է: Ավտոբուս է բարձրանում հարբած մի մարդ, պղտորված աչքերով նայում է ուղևորներին ու ասում. «Բարև ձեզ, ավտոբուսի ժողովուրդ»: Ոչ ոք չի պատասխանում: Կարծում է չլսեցին, կրկնում է: «Ասում եմ, բարև ձեզ, ավտոբուսի ժողովուրդ»: Դարձյալ ոչ մեկը չի պատասխանում: Եվ հարբած մարդը զարմացած քրթմնջում է ինքն իրեն. «Վա՞յ, արա կարող ա ես սխալմամբ տրամվա՞յ եմ նստել»:

Այնպես որ մի ձևացրու, թե սխալմամբ տրամվայ ես նստել: Ու մի զարմացիր: Քո սովորական, հարազատ ամենօրյա ավտոբուսի մեջ ես: Ու առաջին ստորությունը չէ, որի մասին լսում ես: Եղա՞վ: Դե հիմա արի խմենք մարդկային ազնվության կենացը:

(Լցնում է բաժակները: Արգամը չի նայում բաժակին)

Լավ, անցնենք մյուս ուղևորներին:

ԱՐԳԱՄ - Վահ, ո՞նց էի մոռացել... Սպասիր, Միեր... *(Համար է հավաքում)* Բարև, Մարինե, Արգամն է, միացրու մինիստրին, պայմանավորվել էինք: Ի՞նչ, ինչպես թե տեղում չէ: Պայմանա... Իսկ որտե՞ղ է, ե՞րբ կլինի... Մոսկվա՞... ինչպես թե Մոսկվա... իսկ ե՞րբ կգա: Ե՞րբ է թռել, Մարինե...Ուրբաթ օրը երեկոյա՞ն: *(Անջատում է)* Ստոր սրիկա… Ահա իմ վերջին հույսը: Դե, ասա, ի՞նչ անեմ, Միեր, ինձ ասում է կլուծեմ քո աննիկոտին ծխախոտի արտադրության հարցը, ասում է զանգ տուր երկու օր հետո, երբ ինքնաթիռի տոմսը արդեն գրպանում է: Հասկանո՞ւմ ես, երբ ինձ ամեն օր դատախազություն են կանչում...

ՄՀԵՐ - Արգամ Պետրովիչ, ճի՞շտ է, որ քրեական գործ են ուզում հարուցել քո դեմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Ես դրանցից ոչինչ չեմ հասկանում: Գիտեմ միայն, որ երկու-երեք օր հետո կանչելու են հարցաքննության:

ՄՀԵՐ - Ո՞վ...

ԱՐԳԱՄ - Դատախազի օգնական Վարազդատ Գաբրիելյանը:

ՄՀԵՐ - Վարա՞զը: Մեր կուրսից էր: Ես իրավաբանականն եմ ավարտել, չէ՞: Ա՛յ տականք: Փող ունե՞ս: Ուզո՞ւմ ես խոսեմ հետը: Նա փողի համար հարազատ հորն էլ կծախի: Ասում են ու ես լրիվ հավատում եմ, ծանոթներից մեկը գալիս է Վարազդատի մոտ իբրև միջնորդ, կուչ ու ձիգ անելով գրպանից հանում է փողը, չորս կողմը նայելով զգուշությամբ դնում է սեղանին ու ասում. «Այսինչ գործի համար եմ բերել, հազար ռուբլի է, վերցրու, ոչ մեկը չի իմանա»: Վարազդատը ծիծաղում է ու ասում. «Տո գնա հազար մանեթ էլ բեր ու թեկուզ ռադիոյով հայտարարի»: Ահա թե ով է Վարազդատ Գաբրիելյանը: Հիմա ի՞նչ ես ասում, փող ունե՞ս: Ես իսկապես կարող եմ խոսել հետը:

ԱՐԳԱՄ - Չես էլ հարցնում, թե ինչ մեղադրանքներ են:

ՄՀԵՐ - Դա կարևոր չէ: Մեղքերդ ինչքան ծանր լինեն, Վարազդատն այնքան զոհ կլինի: Որովհետև գումարն էլ համապատասխանաբար կմեծանա: Դե լավ, ասա տեսնենք ի՞նչ մեղադրանքներ են:

(Արգամը գրպանից հանում է թուղթը: Ջնջում երկու տեղ ու տալիս)

ԱՐԳԱՄ - Ահա կետերը…

ՄՀԵՐ - *(Կարդում է)* Խրթին պատմություն է… Բոլորվի՞ն չես կռահում, թե ով կլինի հեղինակը: Ես համոզված եմ, որ մոտիկ մարդ է գրել: Ներսի մարդ...

ԱՐԳԱՄ - Իսկ ներսի մարդը ինչպե՞ս կարող էր չիմանալ, որ մայրս երբեք մեր տանը գրանցված չի եղել... Կամ ինչպե՞ս կարող էր չտեսնել, որ երբեք, անգամ մտքովս չի անցել կապ հաստատել քարտուղարուհուս հետ:

ՄՀԵՐ - *(ծափ է զարկում)* Ուրեմն այդ մասի՞ն էլ կա: Դա էիր ջնջում, հա՞: Տեղն է քեզ... Բայց, միևնույն է, փուչիկ է...

ԱՐԳԱՄ - Ի՞նչ է...

ՄՀԵՐ - Փուչիկ: Գրողն իմացել է, որ հենց այդ հարցերին մոտենան, փուչիկը կպայթի:

ԱՐԳԱՄ - Ուրեմն ինչո՞ւ է գրել:

ՄՀԵՐ - Որպեսզի քեզ նման միամիտին համոզի, թե ինքն այնքան էլ մոտիկ մարդ չէ: Իսկ այդ գերեզմանի հետ կապված պատմությո՞ւնն ինչ է: Հուշարձանի կառուցման թղթերն ունե՞ս:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Չէ:

ՄՀԵՐ - Իսկապե՞ս աչքի ընկնող արձան է:

ԱՐԳԱՄ - Փառահեղ... Ամբողջ պատվանդանը սև մարմարից է: Հսկայական սալերը լեռների նման կիտված են իրար վրա և իրենց վերևում բարձրացրած պահում են սպիտակ մարմարից մի ուրիշ սալ, որի վրա գրված է՝ «Պետրոս Մանասյան»: Հա, ի դեպ, ցանկապատն էլ ֆիննական մոխրագույն գրանիտե սալերից է կազմված, որոնք իրար միացած են բրոնզե շղթաներով: Արվեստի գործ է:

ՄՀԵՐ - Կարծես թե տեսել եմ: Եվ ի՞նչ արժե:

ԱՐԳԱՄ - Դե այն ժամանակ էժան էր: Հիմա մոտավորապես հիսուն-վաթսուն հազար կգնահատեն:

ՄՀԵՐ - Կորար, իմ ախպեր: Գոնե կարո՞ղ ես ասել, թե հայրդ ժառանգություն է թողել:

ԱՐԳԱՄ - Բացառված է:

ՄՀԵՐ - Բա ի՞նչ պիտի ասես:

ԱՐԳԱՄ - Պիտի ասեմ, որ դա իմ հոր գերեզմանը չէ:

ՄՀԵՐ - Է, հետո՞: Կհավատա՞ն:

ԱՐԳԱՄ - Սիրելի Մհեր, հավատան, թե չհավատան, բայց դա իսկապես իմ հոր գերեզմանը չէ:

ՄՀԵՐ - Ո՞նց թե...

ԱՐԳԱՄ - Իմ հայրը Ուջանի գերեզմանատանն է թաղված:

ՄՀԵՐ - Սպասիր, ուրեմն այս ամբողջ պատմությունը...

ԱՐԳԱՄ - Գիտե՞ս, քանի օր է ոչ մի վայրկյան մտքիցս չի հեռանում: Երբ քո այդ կուրսեցին հարցրեց քար կտրեցի: Ի՞նչ հուշարձան, ի՞նչ բան: Այն էլ Երևանում: Ու հետո միայն հիշեցի: Մեր բանվորներից մեկին էինք թաղում, անցնում էինք քաղաքային գերեզմանատան ծառուղով, մեկ էլ ինչ-որ մեկը բացականչեց... Վա՞յ, Պետրոս Մանասյան, ձեր հա՞յրն է, Արգամ Պետրովիչ: Հենց այնպես ասացի՝ իսկ ի՞նչ կա, վա՞տ հուշարձան է: Եվ բոլորն սկսեցին գովաբանել ինձ: Ահա ամբողջ պատմությունը, Մհեր...

ՄՀԵՐ - *(Քրքջում է)* Այս փաստը... պահիր վերջում:

ԱՐԳԱՄ - Է՛հ, իսկ ես գիշեր-ցերեկ մտածում եմ, թե ինձ հետ եղած մարդկանցից ով է գրել այդ մասին, այդ նամակը: Ո՞վ: Ինչ վատ բան է կասկածը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄՀԵՐ - Իսկ քո կողքին սովորաբար ովքեր են լինում: Եկ մեկ-մեկ թվենք: Ես եմ, բայց ես այդ թաղմանը չեմ մասնակցել: Վռամ Մաշուրյանը... Իսկ ինչո՞ւ ոչ...

ԱՐԳԱՄ - Վերջ տուր: Վռամը կարո՞ղ է գրել, թե համոզված է, որ ես կապված եմ իր կնոջ հետ:

ՄՀԵՐ - Օհո՛, կենացները գնալով քաղցրանում են: Չեղավ, Արգամ Պետրովիչ, թունդ խաղամոլի նման թղթերը մեկ-մեկ ես գրպանիցդ հանում:

ԱՐԳԱՄ - Դե դա այնպիսի ապուշություն է, որ...

ՄՀԵՐ - Չէ... ինձանից լկտի մարդ չկա, բայց նույնիսկ ես այդ բանը չէի անի: Վռամին հանում ենք:

ԱՐԳԱՄ - Բոլորին էլ հանիր: Զուր տեղը մեղքի տակ չեմ ընկնելու: Ցավն այն է, որ իմ շրջապատից, իմ ընկերներից մեկը սրիկա է:

ՄՀԵՐ - Ուրախացիր, որ մեկն է: Ավտոբուսի նույն անեկդոտն է, էլի, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Չեմ հասկանում, ի՞նչ կապ ունի:

ՄՀԵՐ - Կյանքն էլ մի մեծ ավտոբուս է, էլի, Արգամ Պետրովիչ, որ գնում է իր համար, իր երթուղով: Եվ ուզես թե չուզես կողքիդ պիտի նստած լինեն նաև այդ նամակ գրողը, Վարազդատ Գաբրիելյանը, Սամսոն Իվանիչը, Չինարյանը... անունը չգիտեմ... Վռամ Մաշուրյանը, Մհեր Սամսոնյանը....

ԱՐԳԱՄ - Եթե ավտոբուսում ձեզ նման մարդիկ լինեն, Մհեր, առանց վայրկյան իսկ տատանվելու, կշրջեմ, կխորտակեմ ավտոբուսը: Եվ ինքս էլ կկործանվեմ, հերն անիծած... *(Հնչում է հեռախոսի զանգը: Մհերը վերցնում է լսափողը)*

ՄՀԵՐ - Քեզ:

ԱՐԳԱՄ - Ես եմ: Ո՞վ: Բակուրի կինը՞: Լսում եմ, Նազիկ, ի՞նչ է պատահել: Սրտի նոպայո՞վ: Հիմա տա՞նն է... Գալիս եմ: Ինչո՞ւ նախ գործարան գնամ... Ի՞նչ, մեր ցեխը՞... Ո՞վ է քանդել, ո՞վ է քանդել, Նազիկ...

ՄՀԵՐ - Ի՞նչն են քանդել...

ԱՐԳԱՄ - Աննիկոտին ծխախոտի տեղամասը, Մհեր:

ՄՀԵՐ - Ո՞վ:

ԱՐԳԱՄ - Վռամ Մաշուրյանը...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

(Դիրեկտորի ընդունարանը: Տեսնելով ներս մտնող Մանասյանին, Սուսանը մեջքով փակում է Մաշուրյանի առանձնասենյակի մուտքը:)

ՍՈՒՍԱՆ - Ո՛չ-ո՛չ, հիմա չի կարելի: Նստեք, խնդրում եմ, հանգստացեք մի քիչ: Ես ձեզ շատ եմ խնդրում, Արգամ Պետրովիչ:

(Այնքան բարձր է խոսում, որ Մաշուրյանը լսի: Եվ հայտնվում է Վռամը)

ՎՌԱՄ - Արգամ Պետրովիչ, ինչ լավ է, որ եկար: Հենց նոր քեզ էի ուզում զանգ տալ: Այնքան բարկացած ու վիրավորված եմ, որ ուշքի չեմ գալիս: Այդ Բակուրը... Տես, տես թե ինչ է արել, տես...

(Ցույց է տալիս ծնոտի կապտուկը և պատռված թևքը)

ՍՈՒՍԱՆ - Կատարյալ, կատարյալ խուլիգան: *(Հեռանում է)*

ՎՌԱՄ - Դատի կտամ նոր կիմանա.. . Ձևացրեց, թե սիրտը վատացավ ու թողեց փախավ: Բայց ինձնից ո՞ւր պիտի փախչի... *(Արգամը ձայն չի հանում)* Դե եկ ու լավություն արա մարդկանց...

ԱՐԳԱՄ - Լավությունն այն է, որ քանդե՞լ ես մեր արտադրամասը: Լսիր, իսկապես ո՞վ ես դու, Վռամ Մաշուրյան, սովորական մորթապա՞շտ, թե արտասովոր սրիկա:

ՎՌԱՄ - Հիմա էլ դո՞ւ... Շա՛տ շնորհակալություն, Արգամ Պետրովիչ , այդ էլ իմ լավության փոխարեն... Որ իմանաս Չինարյանին ինչքան եմ խնդրել ու ինչեր եմ խոստացել... Եթե հանձնաժողովը զեկուցագրի մեջ մտցներ նոր արտադրամասի ապօրինի կառուցման փաստը, ոտով-գլխով կորած էինք: Չինարյանն ասաց՝ եթե մենք արտադրամաս մտանք և հայտնաբերեցինք ձեր հակապետական գործերը, ուղիղ բանտ կգնաք, պա՞րզ է... Ուրիշ ի՞նչ կարող էի անել... Ստիպված շաբաթ ու կիրակի օրերին մարդիկ եմ բերել, ապամոնտաժել սարքերը, տեղափոխել, քանդել, հավասարեցրել եմ շենքը... Գիտե՞ս թե ինչ նստեց ինձ վրա... Ես փաստորեն փրկել եմ քեզ... Իսկ այդ սրիկան այսօր առավոտ շուտ, բանվորների ներկայությամբ հարձակվեց ինձ վրա... Տես, տես ինչ է արել...

ԱՐԳԱՄ - Եվ ուրեմն միակ ելքը քանդելն էր... քանդելու փոխարեն հնարավոր չէ՞ր օրինականացնել այն: Ես մինիստրին բացատրեցի և նա կարծես թե հասկացավ, ասաց, որ կլուծի հարցը...

ՎՌԱՄ - Նա ինձ այդ մասին ոչինչ չի ասել:

ԱՐԳԱՄ - Իսկ քանդելու մասին ասե՞լ է... Երևի հարցի լուծում ասելով Սամսոն Իվանիչը հենց դա՞ է նկատի ունեցել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎՌԱՄ - Նա ինձ ոչինչ չի ասել...

ԱՐԳԱՄ - Ենթադրենք... Իսկ դու չէիր կարող նախազգուշացնել ինձ...

ՎՌԱՄ - Գիտեի, որ չէիք համաձայնվի... Չես համաձայնվի ու բանտ կգնաս:

ԱՐԳԱՄ - Ուրեմն ինձ համար էր սիրտդ ցավում:

ՎՌԱՄ - Այո, մի՞թե մենք ընկերներ չենք, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Ես առանց քեզ բանտ չեմ գնա, Վռամ: Որովհետև ընկերներ ենք: Ինչ արել, միասին ենք արել:

ՎՌԱՄ - Ուշ է... Չեմ թաքցնի, այդ մասին էլ եմ մտածել: Հիմա տեղամասը չկա և հիմք էլ չկա...

ԱՐԳԱՄ - Իսկ ես քեզ հետս բանտ կտանեմ հենց տեղամասը ոչնչացնելու համար:

ՎՌԱՄ - Էդ ո՞նց...

ԱՐԳԱՄ - Ես կներկայացնեմ տեղամասի կառուցման վրա ծախսված հսկայական գումարների հաշիվը, ցույց կտամ այն վնասը, որ արտադրամասը քանդելով դու հասցրել ես երկրին և քեզ կտանեմ ինձ հետ...

ՎՌԱՄ - Դու այդ չես անի:

ԱՐԳԱՄ - Ինչո՞ւ:

ՎՌԱՄ - Որովհետև դու ազնիվ մարդ ես:

ԱՐԳԱՄ - Դե իհարկե, իհարկե, ազնիվ մարդկանցից ո՞վ է վախենում, որ դու վախենաս, Վռամ Մաշուրյան:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

(Բակուրի տունը: Թիկնաթոռին, բարձերի վրա, կիսապառկած, թիկնած է Բակուրը: Կողքին, աթոռի վրա, սրվակներ են)

ԱՐԳԱՄ - Ո՞նց ես, եղբայր:

ԲԱԿՈՒՐ - Լ-լավ եմ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Ինչո՞ւ ուրբաթ օրը տեղյակ չպահեցիր ինձ, Բակուր: Գուցե թե կարողանայի խանգարել:

ԲԱԿՈՒՐ - Ճ-ճիշտն ասած՝ չ-չէի հավատում, թե կքանդեն...

ԱՐԳԱՄ - Դե լավ, լավ, ամենակարևորն այն է, որ շուտ լավանաս: Քեզ հանգիստ պահիր: Աշխարհի վերջը չէ: Մեզ ի՞նչ է պատահել. աննիկոտին ծխախոտի հաշվարկները կան ու մենք ողջ ենք: Ամեն ինչ նորից կսկսենք, բոլորի ինատու: Ծխախոտի գործարանում չթողնեն, մեր գյուտը կարամելի ֆաբրիկա կտանենք, կամ էլ իրար հետ մի կոոպերատիվ կբացենք: Հը՞: Միայն թե քեզ լավ պահիր... Լսեցի, որ ուրբաթ օրն էլ ես վատ զգացել ու քեզ շտապօգնությունով են տուն բերել... Սիրտս շատ ցավաց, Բակուր ջան…

ԲԱԿՈՒՐ - *(Խորամանկորեն)* Ուրբաթ օրը ես հ-հիվանդ չէի: Ձևացրի...

(Բարձի տակից մի տուփ սիգարեթ է հանում, մեկնում Արգամին)

ԱՐԳԱՄ - «Պատրա՞նք» այս որտեղի՞ց քեզ, Բակուր:

ԲԱԿՈՒՐ - Ես ու-ուրբաթ օրն առավոտյան ի-իմացա, որ քանդելու են: Այնինչ պատրաստ էր ամեն ինչ: Անմիջապես տեղամաս գնացի, փակեցի դուռը, թ-թողեցի միայն իմ տղաներին՝ Իվանին ու Հայրոյին... երեք ժամվա մեջ մի մեծ տուփ սիգարեթ հավաքվեց... հազար հատ: Լցրեցինք տուփերի մեջ ու...

ԱՐԳԱՄ - Բա որտե՞ղ են տուփերը: Կգտնեն շան որդիները:

ԲԱԿՈՒՐ - Ֆ-ֆաբրիկայից դուրս եմ բերել:

ԱՐԳԱՄ - Ո՞նց, Բակուր ջան... բա էդ մեծ տուփերը չտեսա՞ն:

ԲԱԿՈՒՐ - *(Մի սիգարեթ է վառում, ծխում բավականությամբ)* Զանգահարեցի շտապօգնություն: Մեր Նազիկի եղբայրը հերթապահ էր: Շատ լավ տղա է, նրան կանչեցի:

ԱՐԳԱՄ - Ու շտապօգնության մեքենայով էլ դո՞ւրս բերեցիր:

ԲԱԿՈՒՐ - Պառկել էի տու-տուփերի վրա: Փափուկ-փափուկ էր…

ԱՐԳԱՄ - Բա որ բռնեին, խելագար, ախպեր ջան...

ԲԱԿՈՒՐ - Հիմա հարկավոր է շտապ վերև տանել:

ԱՐԳԱՄ - Վերև, ո՞ւր...

ԲԱԿՈՒՐ - Մոսկվա պ-պիտի տանել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - *(Հառաչելով)* Ի՞նչ անեմ... ինձ խորհուրդ են տվել չբացակայել քաղաքից...

ԲԱԿՈԻՐ - Ե-ես կտանեմ:

ԱՐԳԱՄ - Դո՞ւ:

ԲԱԿՈԻՐ - Ես, ես, ի-ինձ մերժելը հեշտ չի, որովհետև ռուսերեն չգիտեմ: Եվ հետո... հ-հետո, որպեսզի շ-շուտ պրծնեն ինձնից, ինչ-որ պ-պետք է կանեն: Ա-անեկդոտի կակազի նման: Գ-գիտես, չէ՞, որ ասում է՝ մ-մարդ մի քիչ էլ խ-խոսել պ-պիտի իմանա... *(ծիծաղում են)*

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ

(Արգամի բնակարանը: Արգամը, Աշոտը: Աշոտը ձեռքի մագնիտոֆոնը դնում է սեղանին)

ԱՇՈՏ - Ուզում եմ մի բան լսեք, Արգամ Պետրովիչ...

(Լսվում է Զախ Հարութի երգը) Ես սխալ էի, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Ո՞ր հարցում:

ԱՇՈՏ - Որ կարծում էի, թե ձեր տեղը ծախել են... և մնացածը:

ԱՐԳԱՄ - Իսկ գիտե՞ս, թե իրականում ինչ է եղել:

ԱՇՈՏ - Գիտեմ: Ձեզ վերևից են հանել:

ԱՐԳԱՄ - Ի՞նչ գիտես:

ԱՇՈՏ - Գիտեմ, էլի, Արգամ Պետրովիչ: Արդյունաբերության բաժնի վարիչ Գուլանյանը զանգահարել է մինիստրին ու ասել, որ քարտուղարի կարգադրությամբ պետք է աշխատանքից ազատել «Արգիշտիի» դիրեկտոր Արգամ Մանասյանին:

ԱՐԳԱՄ - Ենթադրենք: Բայց ինչի՞ համար, չի՞ ասել:

ԱՇՈՏ - Ասում են, թե դուք ինչ-որ բան եք գրել, որը դուր չի եկել վերևներում...

ԱՐԳԱՄ - Դրա ձայնը կտրի, տրամադրություն չունեմ... *(լռություն)* Ասացի անջատի, այ տղա: Չլսեցի՞ր...

ԱՇՈՏ - Հիմա ձեզ համար մի հետաքրքիր բան կլսեք, Արգամ Պետրովիչ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Ի՞նչ...

ԱՇՈՏ - Սրանից հետո է...

(Երգն անջատվում է միանգամից: Խշշոց է լսվում, հետո չխկոց: Լսվում է մի խոսակցություն)

ՄԻՆԻՍՏՐ – *(Ձայնը)* Կամաց, արա...

ՎԼԵ – *(Ձայնը)* Հետո՞, փողերս ե՞րբ ես տալու, մեր տղա:

ՄԻՆԻՍՏՐ - Կտամ էլի, Վլե ջան, ես իմ պարտքերը ե՞րբ չեմ տվել:)Պաուզա(Համ էլ խաղում ենք, էլի, ո՞վ գիտի..... Տղերքն ինչո՞ւ են ուշանում:

ԱՐԳԱՄ – *(Ապշած)* Սամսոն Իվանիչն է, այդ ո՞ւմ հետ է խոսում:

ԱՇՈՏ - Կոնդի Վլեի:

ԱՐԳԱՄ - Վլեն ո՞վ է :

ԱՇՈՏ - Գող է: Զակոննի գող: Լսեք, լսեք:

ՎԼԵ – *(Ձայնը)* Էգուց քո ժամկետը լրանում է: Եթե մինչև ժամը ութը յոթանասուն հազարը չբերես, ականջներդ կպոկեմ, Սամո...

ՄԻՆԻՍՏՐ - Չե՞ս ամաչում: Ընկերներ ենք, չէ՞:

ՎԼԵ - Փողի մեջ ի՞նչ ընկեր, արա...

ՄԻՆԻՍՏՐ - Վլադիմիր Միխայլովիչ, խնդրում եմ երկու շաբաթ հետաձգես... ուղիղ երկու շաբաթ...

ՎԼԵ - Էն պիժոնի հրամանը տուր... քվիթ...

ՄԻՆԻՍՏՐ - Դրա համար եմ ասում, էլի: Տեսա՞ր, որ խաթրիցդ դուրս չեկա: Նշանակեցի...

ՎԼԵ - Ի տեղի...

ՄԻՆԻՍՏՐ - Քեզ համար ի՞նչ կա: Ոչ քո հարցը քննում են, ոչ էլ բացատրություն են պահանջում: Օջախի կողքին նստած հանգիստ ուտում ես քո խորոված, իսկ թե ով է վառվում կրակի մեջ, պետքդ չի:

ՎԼԵ - Քեզ ո՞վ էր ասում մինիստր դառնաս: Լավ ղումարբազ էիր, էլ ի՞նչ էիր ուզում, ապրեիր հանգիստ....

ՄԻՆԻՍՏՐ - Լա՛վ ղումարբազ... լավ ղումարբազը քեզ յոթանասուն հազար չէր տարվի...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԼԵ - Էլի սկսեցիր նվնվալ... Հորդ փողերն ես տարվում, էլի... կամ էլ հալալ քրտինքդ: Կարծում ես չիմացա՞, թե քանիսով տվեցիր շոկոլադի ցեխը: Կամ թե ինչի հանկարծ շաքարի պահեստը չոփուռ Մանուկին տվեցիր... Բերանս մի բացի...

ՄԻՆԻՍՏՐ - Դու նստի ու իմ փողերը հաշվի...

ՎԼԵ - Ինչի՞ պիտի չհաշվեմ, էգուց մյուս օրը էլի իմ գրպանն են մտնելու:

ՄԻՆԻՍՏՐ - Երկու շաբաթ, Վլադիմիր Միխայլովիչ... Վայ, ոնց որ թե եկան...

(Լսվում է չխկոց, ժապավենն անջատվում է, նորից հնչում է Զախ Հարութի երգը՝ Սիրում եմ յա՛ր քեզ...)

ԱՇՈՏ - Պետք կգա՞, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Չգիտեմ, Աշոտ ջան, բայց դու ո՞նց ես հաջողացրել այս ձայնագրությունը:

ԱՇՈՏ - Չեմ ասի, Արգամ Պետրովիչ, կներեք...

ԱՐԳԱՄ - Դե իհարկե, իհարկե... *(Երկար լռությունից հետո)* Աշոտ ջան, ես դեռ չգիտեմ, թե ինչ պետք է անեմ այս անիծյալ ժապավենը, բայց բոլոր դեպքերում շնորհակալ եմ քեզ: Ո՞վ գիտե, գուցե թե սա ինձ փրկի... *(լռություն)* Իսկ եթե ես սա հրապարակ հանեմ, քո ընկերոջը ոչինչ չի՞ պատահի: Խղճի բան չէ, որ իմ պատճառով տուժի մարդը:

ԱՇՈՏ - Հանգիստ եղեք, Արգամ Պետրովիչ: Իմ ընկերները խոսակցության պահին դրսում իրենց մեքենաների մեջ նստած են եղել: Եթե կասկածեն էլ՝ թուղթ խաղացողներն իրար վրա պիտի կասկածեն: Իսկ ի՞նչ վատ կլինի եթե մի լավ զզեն իրար: Հո տեսաք ինչ տիպեր են: Բա նրանց մասին արժե՞ մտածել:

ԱՐԳԱՄ - Չարժե, Աշոտ: Նրանք մեր մասին հաստատ չէին մտածի… *(Լռություն)* Աշոտ, իսկ պետք չէ՞ որ մենք ինչ-որ բան անենք քո ընկերոջ… ընկերների համար... Մարդիկ վտանգի են ենթարկել իրենց, չարչարվել են…Գուցե...

ԱՇՈՏ - Աշխարհում ամեն ինչ չէ, որ կարելի է փողով գնել, Արգամ Պետրովիչ, կներեք, իհարկե...

ԱՐԳԱՄ - Ներիր ինձ, ներիր, հա՞, Աշոտ: Ես ինձ լրիվ կորցրել եմ, տղաս...

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Մինիստրի առանձնասենյակը)

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՄԻՆԻՍՏՐ - Ո՞վ ձեզ ներս թողեց: Ես զբաղված եմ, Մանասյան:

ԱՐԳԱՄ - Ես ավելի շատ եմ զբաղված, բայց ժամանակ գտա ձեզ հետ հանդիպելու:

ՄԻՆԻՍՏՐ - Ի՞նչ է, ուզում եք միլիցիա՞ հրավիրեմ:

ԱՐԳԱՄ - Մի՞թե դատախազությունը քիչ է, Սամսոն Իվանիչ: Հետո, ճիշտն ասած ինձ պետք է, որ մենք երես առ երես խոսենք: Հերթապահ միլիցիոները մեզ կխանգարի:

ՄԻՆԻՍՏՐ - Ես ձեզ հետ խոսելու բան չունեմ, Մանասյան:

ԱՐԳԱՄ - Իսկ ես ունեմ, Սամո: Ինձ կոնդի Վլեն է ուղարկել:

ՄԻՆԻՍՏՐ - Ո՞վ:

ԱՐԳԱՄ - Վլադիմիր Միխայլիչը:

(Մինիստրը ցնցվում է, չի կարողանում խոսել)

ՄԻՆԻՍՏՐ - Նստիր: Արգամ Պետրովիչ: Նստիր և ասա տեսնեմ ի՞նչ անուն էիր տալիս և ի՞նչ էիր ուզում դրանով ասել: *(Նայում է նրա ձեռքի փաթեթին)* Այս ի՞նչ ես բերել:

ԱՐԳԱՄ - Սամսոն Իվանիչ, երեկ հեռուստատեսությամբ այդ ինչե՞ր էիք ասում:

ՄԻՆԻՍՏՐ - Նախ պատասխանիր իմ հարցին:

ԱՐԳԱՄ - Ո՞ր հարցին, թե այս փաթեթն ինչո՞ւ եմ բերել:

ՄԻՆԻՍՏՐ - Վլադիմիր Միխայլովիչը որտեղից գիտի քեզ:

ԱՐԳԱՄ - Չեմ խաբի, նա ինձ չի ճանաչում: Բայց ես տվեցի նրա անունը, որպեսզի դուք այ այսպես լսեք ինձ: Խոստովանեք, որ այլ ելք չունեի: Չէ՞ որ դուք արդեն միլիցիոներ էիք հրավիրում:

ՄԻՆԻՍՏՐ - Դե լավ, խոսենք, ես հարգում եմ համառ ու հնարամիտ մարդկանց:

ԱՐԳԱՄ - Երեկ հեռուստատեսությամբ ասացիք: Ես այնտեղից իմացա, որ դուք խորապես հարգում եք հնարամիտ, ձեռներեց, պրպտուն միտք ունեցող աշխատողներին, որ գյուտարարների եղբայրն եք և ռացիոնալիզատորների կնքահայրը: Լսեցի: Բայց մի՞թե մեր գյուտի մասին չգիտեիք: Դուք չէի՞ք կոլեգիայի նիստում խոսում այն լայն հեռանկարների մասին, որ բացելու է մինիստրության առջև աննիկոտին ծխախոտի արտադրությունը:

ՄԻՆԻՍՏՐ - Ասել եմ, բայց որտե՞ղ է այդ ծխախոտը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Ուրեմն չգիտե՞ք, որ ֆաբրիկայում նոր արտադրամաս ենք ստեղծել:

ՄԻՆԻՍՏՐ - է, չեղավ, Արգամ Պետրովիչ: Ես ազնվորեն չե՞մ ասել, որ եթե ձեր նոր արտադրության գաղտնիքը բացվի, ես պետք է հրաժարվեմ: Եվ ավելին՝ պետք է պատժեմ քեզ ապօրինության համար: Իսկ ինձ ոչ միայն տեղեկացնում են, այլև առանձնասենյակ են ներխուժում թղթակիցներ, ռեժիսորներ, լուսավորողներ ու ձայնագրողներ, միկրոֆոնն իմ առջև են դնում և ուղղակի հարց տալիս: Ի՞նչ կարող էի պատասխանել, ընկեր Մանասյան: Ես նախ և առաջ պետական գործիչ եմ:

ԱՐԳԱՄ - Բայց մի՞թե իսկական պետական գործիչը կկարգադրեր ոչնչացնել պատրաստի արտադրամասը: Պետությանը օգուտ չէ՞ր լինի, եթե օրինականացվեր այն: Մանավանդ, որ ես ձեզ խոստացա երկու-երեք օրից արտադրանք տալ:

ՄԻՆԻՍՏՐ - Ի՞նչ է, կրկնե՞մ նորից: Կախարդական շրջան էր ստեղծվել: Արտադրությունը պլանավորված չէր, որովհետև արտադրանք չկար: Իսկ արտադրանք չկար, որովհետև պլանավորված չէր: Եթե դու դիրեկտոր չլինեիր, ես նույնիսկ բանավոր, նույնիսկ աչքերս փակելով թույլ չէի տա, որպեսզի ֆինանսական խախտումների դիմես՝ աննիկոտին ծխախոտ ստանալու համար: Դուք պետք է պատենտավորեիք ձեր հայտնագործությունը, հաստատեիք մեր և համամիութենական ինստիտուտներում, նմուշները մեզ ներկայացնեիք, որպեսզի դրանից հետո մենք կարողանայինք մտնել Պետպլան, Մինիստրների խորհուրդ: Իսկ դա ինչքա՞ն ժամանակ կտևեր:

Սա էլ իմ լավությո՞ւնը: Ես ի՞նչ իմանայի, որ հանձնաժողով է նստելու ձեր գործարանում: Ի՞նչ իմանայի, որ դատախազությունն էլ իր հերթին է քննություն կատարելու: Նման պայմաններում ես ինչպե՞ս կարող էի օրինականացնել աննիկոտին ծխախոտի արդեն ավանտյուրիստական հռչակ ձեռք բերած արտադրությունը: Չէի կարող, Արգամ Պետրովիչ: Դու միայն քո մասին ես մտածում: Եվ դա հասկանում եմ: Դա նույնպես մարդկային է: Բայց ես պարտավոր եմ մեր ամբողջ բնագավառի անբասիր անվան մասին մտածել, պետական օրինականության պահպանման, կուսակցության կողմից մեր առջև դրված գլոբալ խնդիրների մասին մտածել...

ԱՐԳԱՄ - Ուրեմն դուք պետության շահերի մասին էիք մտածում:

ՄԻՆԻՍՏՐ - Իսկ ինչ է, դա քեզ տարօրինա՞կ է թվում:

ԱՐԳԱՄ - Այո: Ես չեմ հավատում այն մարդկանց, որոնք երկու լեզու ունեն և երկու լեզվով են խոսում: Ըստ որում՝ դրանցից մեկը տնական, գրպանի լեզու է, իսկ մյուսը նախատեսված է ամբիոններից, բեմերից, հեռուստատեսությամբ խոսելու համար:

ՄԻՆԻՍՏՐ - Չեմ հասկանում: Ինչի՞ մասին է խոսքը:

ԱՐԳԱՄ - Հիմա կհասկանաք: *(Բացում է փաթեթը: Հայտնվում է փոքրիկ մի մագնիտոֆոն)*

ՄԻՆԻՍՏՐ - Յա, արա, դու ձայնագրո՞ւմ էիր ինձ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Դուք լսեք, լսեք, Սամսոն Իվանիչ... *(Միացնում է)*

ՎԼԵ - *(Զայնը)* Հետո՞: Փողերս ե՞րբ ես տալու, մեր տղա:

ՄԻՆԻՍՏՐ- *(Զայնը)* Կտամ, էլի, Վլե ջան, ես իմ պարտքերը ե՞րբ չեմ տվել:

(Մինիստրը վեր է թռչում սարսափած)

ՎԼԵ - *(Զայնը)* Էգուց քո ժամկետը լրանում է: Եթե մինչև ժամը ութը յոթանասուն հազարը չբերես, ականջներդ կպոկեմ, Սամո:

ՄԻՆԻՍՏՐ - *(Զայնը)* Չե՞ս ամաչում, ընկերներ ենք, չէ՞...

(Արգամը անջատում է մագնիտոֆոնը)

ԱՐԳԱՄ - Թե՞ ուզում եք շարունակությունն էլ լսել, Սամսոն Իվանիչ: Դե գիտեք, էլի, մեր գործարանի մասին է, շոկոլադի արտադրամասի, շաքարի պահեստի...

(Մինիստրը քիչ է մնում հարձակվի մագնիտոֆոնի վրա)

Միտք չունի, Սամսոն Իվանիչ, ամեն օր դետեկտիվ կինոնկարներ ենք նայում: Իմանալով, թե ում հետ գործ ունեմ, նպատակահարմար գտա բազմացնել այս ժապավենը ու պահել տարբեր տեղերում:

ՄԻՆԻՍՏՐ - *(Ջուր է լցնում, խմում, շփում ճակատը, ծոծրակը)*

Եվ ի՞նչ ես որոշել: Ի՞նչ պիտի անես դա:

ԱՐԳԱՄ - Դեռ չգիտեմ:

ՄԻՆԻՍՏՐ - Փոխարենն ի՞նչ ես ուզում:

ԱՐԳԱՄ - Ձեզ համար ամեն ինչ իր գինն ունի, չէ՞:

ՄԻՆԻՍՏՐ - Արգամ Պետրովիչ, խնդրում եմ, մի կործանիր ինձ: Ես որ գնամ, կարծում ես իմ տեղը հրեշտա՞կ է գալու: Տուր ինձ այդ ժապավենը, փոխարենը ինչ կարող եմ՝ կանեմ քեզ համար: Իսկ ես շատ բան կարող եմ: Կարճել կտամ քո քրեական գործը: Քեզ մի ավելի լավ տեղ կփոխադրեմ: Ինչ ուզես կանեմ՝ միայն թե մի խայտառակիր ինձ: Որպես մարդ եմ խնդրում:

ԱՐԳԱՄ - Դուք մարդ չեք:

ՄԻՆԻՍՏՐ - Լավ, լավ, թող քո ասածը լինի: Ես մարդ չեմ: Բայց դու մարդ ես, չէ՞: Ինչո՞ւ ինձ չես խղճում: Դու վրեժ լուծեցիր ինձանից ու ճիշտ արեցիր: Բայց հերիք է, էլի, ներիր ինձ, Արգամ Պետրովիչ, ես իմ մեղքի համար պատրաստ եմ ամեն ինչ վճարել...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - *(Զայնը)* Վճարե՛լ... Ստոր մարդ, դու որ ամեն ինչին գին ես դրել և անգիր գիտես այդ գները, դե ուրեմն ասա ինձ, թե ինչ արժե և որքան ես գնահատում իմ ցավը, զարմանքը, հուսախաբությունը, տառապանքը, գիշերային անքնությունը, անորոշության տագնապը, արտադրամասի կործանումը, Բակուրի սրտի նոպան, Հասմիկի լացը, աղջկաս արյունակալած աչքերը, մորս ողբն ու աղոթքները, ընկերներիս դավաճանությունը, պաշտոնակիցներիս արհամարհանքը, դատախազի օգնականի նենգությունն ու լկտիությունը, ընդունարաններում իմ նվաստացած սպասելը... Ի՞նչ արժեն: Ամեն մեկի համար առանձին-առանձի՞ն ես վճարելու, թե բոլորի համար միասին:

Չէ, այն ո՞վ էր որ ասաց; Հա, իմ հավատարիմ ընկերը, իմ տղան, իմ վարորդը: Նա ասաց՝ աշխարհում ամեն ինչ չէ, որ փողով կարելի է առնել: Ճիշտ է, ճիշտ է, իրավացի ես, Աշոտ: Եվ դու էլ իմացիր սրանից հետո՝ Սամսոն Բաղալյան: *(բարձրաձայն)*

Սամսոն Իվանիչ, այս ժապավենը Կենտկոմ չեմ տանի միայն մի պայմանով:

ՄԻՆԻՍՏՐ - Լսում եմ:

ԱՐԳԱՄ - Դուք պետք է հեռանաք աշխատանքից:

ՄԻՆԻՍՏՐ - Հետո՞... Դա քեզ ի՞նչ կտա:

ԱՐԳԱՄ - Մեծ-մեծ խոսքեր չեմ ուզում ասել: Վախենում եմ հակառակ կողմից նմանվեմ քեզ: Բայց ես հիմա իմ մասին չեմ մտածում: Ազնիվ խոսք, ամենամեղմ ձևով ասած՝ արդար բան չէ, որ մեզ այսօր Սարի թաղի խուլիգան Սամոն է ղեկավարում: Զուր մի ձգեք պիջակի թևքը: Դաջվածքն այնուամենայնիվ երևում է:

ՄԻՆԻՍՏՐ - Ես քեզ ավելի խելացի էի կարծում: Ախր դու ոչինչ չես շահելու: Ոչինչ: Հիմա արդեն որպես թուղթ խաղացող եմ ասում քեզ՝ հազարից մի անգամ է այսպիսի հնարավորություն ստեղծվում: Քո ձեռքին կոզիրի տուզն է, Արգամ Պետրովիչ: Օգտվիր, էլի... Բա չե՞ս ուզում, որ ես քեզ համար ոսկե ձկնիկ ծառայեմ:

ԱՐԳԱՄ - Չեմ ուզում: Շատ շնորհակալ եմ: Ես ոսկե ձկնիկի պատմության վերջն էլ գիտեմ:

ՄԻՆԻՍՏՐ - Արգամ Պետրովիչ...

ԱՐԳԱՄ - Ես գնացի: Դուք ժամկետներ շատ եք սիրում: Երեք օր հետո զանգ եմ տալու: Եթե տեղում լինեք, ուղիղ գնում եմ Կենտկոմ:

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ

(Դատախազի օգնականի խուցը: Գաբրիելյանը տնքալով շիշ է բացում, խմում)

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՐԱԶԴԱՏ - Ձեր գործը, Մանասյան, ձգձգվեց, որովհետև հանձնաժողովի նյութերը ևս կցվեցին գործին:

ԱՐԳԱՄ - Գիտեմ: Կարելի՞ է մի հարց տալ ձեզ:

ՎԱՐԱԶԴԱՏ - Տվեք:

ԱՐԳԱՄ - Ինձ որ կալանավորեք, դա կլինի հօգուտ պետության շահերի՞: Ահա իմ միակ հարցը: Կբարելավվե՞ն աշխատանքները, բանվորները ավելի ազնիվ կդառնան ու չե՞ն գողանա արտադրանքը: Ֆինանսական կարգապահության խախտումներ այլևս չե՞ն լինի:

ՎԱՐԱԶԴԱՏ - Դժվարանում եմ ասել:

ԱՐԳԱՄ - Այո, դժվար է ասելը, որովհետև ոչ դուք և ոչ էլ ես ի վիճակի չենք լուծելու այդ հարցերը: Ես ձեզ անկեղծ եմ ասում՝ ինչ խախտումներ որ թույլ եմ տվել, եղել են հօգուտ պետության շահերի: Ոչ թե սխալվել եմ, ոչ թե աչքաթող եմ արել, այլ կատարել եմ գիտակցաբար: Ես թեկուզ մի կոպեկ անձնական շահ չեմ ունեցել: Ահա ինձ համար հարցերի հարցը: Մի՞թե դրա համար կալանավորում են մարդկանց: Ամենահասարակ բանն ասեմ. նախկինում մեր աշխատողները ուրախությամբ էին գործուղվում Մոսկվա կամ որևէ այլ տեղ, իսկ հիմա հրաժարվում են, պատիժ են համարում իրենց համար: Ինչո՞ւ: Որովհետև երեսնական թվականների հաշվարկներով այսօր որպես օրապահիկ, մենք նրանց նույն երկու ռուբլի վաթսուն կոպեկն ենք տալիս, երբ այդ գումարով շատ-շատ նրանք միայն թեթև նախաճաշել կարող են: Եվ լավագույն դեպքում՝ երկու-երեք ռուբլի ենք վճարում գիշերելու համար, երբ հյուրանոցի որևէ համարում տեղավորվելն առնվազն չորս ռուբլի արժե և դեռ անձնագրի մեջ էլ գոնե մի տասանոց պետք է դնես: Հիմա պա՞րզ է, թե որտեղից են ծագում խախտումները: Պա՞րզ է, թե ինչու երկու-երեք օրվա գործուղման փոխարեն, խախտելով կարգը և մեզ մոռացած վերին ղեկավարությանը խաբելով տասը օրվա գործուղում ենք ձևակերպում, որպեսզի մարդիկ գոնե երկու օր կարողանան ապրել: Եվ նույն նկատառումներով՝ ապրանքներ տեղափոխող վարորդին մեկ ուղերթի համար հինգ ուղերթ ենք ձևակերպում, որպեսզի մարդը աշխատի: Այդ խախտումները ես հանուն իմ շահի՞ եմ արել:

ՎԱՐԱԶԴԱՏ - Այսպես որ գնանք...

ԱՐԳԱՄ - Ներեցեք ինձ, ես չեմ ուզում էժանագին մատնիչի դեր կատարել և ասում եմ այն բաները, որ բոլորը գիտեն: Գիտեն, բայց ձևացնում են թե չգիտեն: Ահա տարբերությունը: Եթե դուք ինձ համառորեն մտադիր եք կալանավորել այդ մեղքերի համար, ինչո՞ւ միանգամից կալանքի արտոնագիր չեք գրում երկրի բոլոր գործարանների ու ֆաբրիկաների, բոլոր հիմնարկությունների և ձեռնարկությունների դիրեկտորներին ևս կալանքի վերցնելու համար: Բոլորին անխտիր: Որովհետև եթե նրանք խախտումներ թույլ չտան, չեն կարող աշխատել: Եթե հավելագրումներ չկատարեն՝ բանվորներն ու ծառայողները քաղցած կմնան: Ի՞նչ է, դուք չգիտեի՞ք, որ,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ասենք՝ կոնստրուկտորների աշխատավարձը սահմանվել է այն ժամանակ, երբ կարտոֆիլն ու խառը կանաչին հինգ կոպեկ արժեին: Իսկ հիմա այդ նույն խառը կանաչին մեկ ռուբլի արժե: Մարդիկ ո՞նց ապրեն: Եվ դիրեկտորն ինչպե՞ս խախտում չանի, գործարանին տասնյակ հազարների օգուտ բերող կոնստրուկտորին կամ նրա կնոջը կամ զոքանչին ինչպե՞ս չձևակերպի նաև իբր թե պահակ կամ հավաքարար, որպեսզի նա զոնե մի ութսուն ռուբլի ավել ստանա:

Դա հանցա՞նք է: Թող լինի հանցանք: Բայց հանուն ինչի՞: Հանուն արդարության և գործի շահերի: Որովհետև չի կարելի աշխատավարձի նույն չափը տալ ծույլ ու անբանին և աշխատասեր, տաղանդավոր մարդուն: Ո՞վ կարող է հաշվել համահարթեցման պատճառով երկրին տրված վնասները: Երբ աշխատող մարդը սովորեց չաշխատել: Մտեք որ ձեռնարկությունն ու հիմնարկությունն ուզում եք, աշխատողների առնվազն կեսը ծխում է միջանցքներում ու թրև գալիս սենյակից սենյակ: Եվ վերջապես որ ժամին կուզեք քաղաք դուրս եկեք: Փողոցները լեփ-լեցուն են ավտոմեքենաներով ու մարդկանցով: Ովքե՞ր են դրանք: Բոլորն էլ գիշե՞րն են աշխատում, թե ուղղակի աշխատանք լքած մարդիկ են: Հենց այդ է որ կա: Որովհետև աշխատեն թե չաշխատեն, աշխատավարձը նույնն է և այդ աշխատավարձով ապրել չի լինի:

Ուրեմն ի՞նչ անել, կալանավորե՞լ բոլորին:

Ավելի արդար ու ճիշտ չի՞ լինի, եթե կալանքի ընդամենը մի քանի արտոնագիր գրեք այն ղեկավարներին մեկուսացնելու համար, ովքեր իրենց դինոզավրային քաղաքականությամբ, քարացած մտածողությամբ, անտարբերությամբ ու անճարակությամբ, առաջ նայելու փոխարեն ետ-ետ են նայում և ծնում հանցագործության հենց այն դրդապատճառները, որոնք դուք այսօր պարտավոր եք կանխել: Պարտավոր եք, բայց չեք կարող կանխել, որովհետև շատ ավելի հեշտ է մի քանի պատահական բռնվածներին բանտարկելը, քան թե մտածելը բոլոր դեռևս չբռնվածների ճակատագրի մասին:

ՎԱՐԱԶԴԱՏ - Այդ բոլորը դատարանում կասեք, Մանասյան, եթե դատավորը թույլ տա: Եթե այդքան ազնիվ ու անշահախնդիր մարդ եք, ինչքան ցույց եք տալիս ինձ մոտ, ինչո՞ւ մինչև հիմա, նախքան ձեր նկատմամբ քրեական զործ հարուցելը, ձեր այդ մտքերն ու զգացմունքային խոսքերը որևէ ամբիոնից չէիք արտասանում:

ԱՐԳԱՄ - Որտեղ որ պետք է, ասել եմ:

ՎԱՐԱԶԴԱՏ - Եթե որտեղ որ պետք է ասած լինեիք և ձեզ լսած լինեին՝ ձեզ վաղուց հեռացրած կլինեին աշխատանքից: Որովհետև նման մտքեր միայն հոգեբուժական հիվանդանոցում կարելի է ազատ ասել:

ԱՐԳԱՄ - Հաճելիորեն ցնցված եմ: Դուք նույնիսկ Շվե՞յկ եք կարդացել... Հարգելի ընկեր, միայն ես չէ, որ այդպես եմ մտածում: Թերթ չե՞ք կարդում, ինչ է: Ես այդ բոլորի մասին նույնիսկ զեկուցագիր եմ ուղարկել ղեկավարությանը:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՎԱՐԱԶԴԱՏ - Դրա համար էլ այստեղ եք: Կամ պետք է այստեղ լինեիք, կամ էլ համապատասխան փաստաթուղթ պետք է ունենայիք, որ ուղարկեին այնտեղ: Զարմանալի մարդ եք, խեղճանալու, խնդրելու, մարդավարի խոսելու փոխարեն, եկել ճառեր եք կարդում իմ գլխին: Վաղը առերեսումների եմ անցնելու: Երբ երեսուն հոգի կկանգնեն ձեր առաջ ու կասեն, թե դուք նրանց պարգևատրություն և օգնություն եք դուրս գրել, իսկ ձեր գործարկոմի նախագահը հենց դրամարկղի մոտ այդ փողերը խլել է նրանց ձեռքից, կտեսնենք այն ժամանակ ինչ կասեք:

ԱՐԳԱՄ - Կասեմ, որ եղել է այդպիսի բան և հենց նույն բանվորները մասնակցել են նույն գումարով հյուրերի համար կազմակերպված խնջույքին:

ՎԱՐԱԶԴԱՏ - Հյուրերին ուրիշների հաշվին չեն հյուրասիրում:

ԱՐԳԱՄ - Գործարանը այլ միջոցներ չունի:

ՎԱՐԱԶԴԱՏ - Ձեր տուն տանեիք:

ԱՐԳԱՄ - Որ այսօր հարցնեիք, թե ի՞նչ միջոցներով եմ հարյուր հոգու հյուրասիրել մեր տանը:

ՎԱՐԱԶԴԱՏ - Մեղավորը ես եմ, խնայում էի ձեզ: Համբերում էի: Բավական է: Վաղը կներկայանաք իրերով: Լսո՞ւմ եք, իրերով...

ԱՐԳԱՄ - Ուրեմն որոշեցիք կալանավորե՞լ:

ՎԱՐԱԶԴԱՏ - Անպայման: Իսկ մինչ այդ պատասխանեք իմ հարցերին:

(Մի կապ թուղթ է դնում իր առջև)

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԴ

(Մհեր Սամսոնյանի արվեստանոցը: Մարիամն ու Արգամը)

ԱՐԳԱՄ - Դե ասա, ի՞նչ է պատահել, Մարիամ... Նստիր...

ՄԱՐԻԱՄ - Մրսում եմ, իմ կողքին նստեք, Արգամ Պետրովիչ...

ԱՐԳԱՄ - Մարիամ, ես ոչինչ չեմ հասկանում... ի՞նչ է պատահել վերջապես, ասա... թեյ սարքե՞մ քեզ համար...

ՄԱՐԻԱՄ - Գրկիր ինձ, հա՞, դողս չի անցնում... մոտ եկ, մոտ եկ, սիրելի մարդ...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Մարիամ...

(Մարիամը ինքը գրկում ու համբուրում է նրան, համբուրում է խելահեղորեն):

ՄԱՐԻԱՄ - Սիրելիս... Արգամ... սիրելի մարդ... գրկիր ինձ, ամուր, ավելի ամուր, խեղդիր ինձ քո գրկում... այ այդպես, այ այդպես, այ այդպես:

(Արգամն ակամա պատասխանում է նրա համբույրներին, հետո խելագարված ինքն էլ է սկսում համբուրել: Ցնցվում, շարժվում են Միհեր Սամսոնյանի դիմանկարները, պեյզաժները, ծաղիկները, խառնվում իրար: Հետո մարում է լույսը, իսկ երբ կատաղի երաժշտության տակ վառվում է նորից, Մարիամը պառկած է բազմոցին, իսկ Արգամը նստած է աթոռին՝ նրա դիմաց):

ԱՐԳԱՄ - Այս ի՞նչ կատարվեց, մենք խելագարվե՞լ ենք, ինչ է... Ինչպե՞ս հայտնվեցիր, իմ ուշացած հրաշք... Մի՞թե քեզ աստված ուղարկեց իմ տառապանքների, իմ հուսահատության, իմ ցավի փոխարեն:

ՄԱՐԻԱՄ - Ինձ վրեժն է ուղարկել քեզ մոտ, սիրելիս...

ԱՐԳԱՄ - Ի՞նչ վրեժ:

ՄԱՐԻԱՄ - Ինձ քեզ մոտ է բերել մի մարդու, մեր ընդհանուր ընկերոջ դավաճանությունը իմ և քո նկատմամբ:

ԱՐԳԱՄ - *(ծիծաղում է)* Ով էլ լինի, ինչ արած էլ լինի, ես ներում եմ նրան.

ՄԱՐԻԱՄ - Մի շտապիր: Դու գիտե՞ս, որ հենց այստեղ, Միհեր Սամսոնյանի այս արվեստանոցում, այս բազմոցի վրա, իմ ամուսին Վռամը շուրջ մեկ ամիս է, ինչ դավաճանում է ինձ:

ԱՐԳԱՄ - Վռամը՞:

ՄԱՐԻԱՄ - Ես իմ աչքով տեսա... Եվ գիտե՞ս ում հետ է դավաճանում ինձ:

Մտքովդ չի անցնի, քո նախկին քարտուղարուհու, Սուսաննայի, այդ խրտվիլակի հետ:

ԱՐԳԱՄ - *(Փշրված)* Այդ պատճառո՞վ ցանկացար, որ մեր հանդիպումը հենց այս արվեստանոցում կայանա:

ՄԱՐԻԱՄ - Այո: Լավ չէի՞ մտածել: Եթե վրեժ է, թող բոլոր կանոններով լինի:

ԱՐԳԱՄ - Այդ ձևով վրեժ լուծելով իրարից, ամուսիններով շատ հեռու չե՞ք գնա:

ՄԱՐԻԱՄ - Ես նրա հետ այլևս չեմ ապրի, վերջ: Կասկած չունենաս, սիրելիս: Ես կարող էի քեզ մոտ գալ նրանից բաժանվելուց հետո: Բայց դա արդեն դավաճանություն չէր լինի,

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

դրա համար էլ վճռեցի հիմա գալ, նախքան բաժանվելը: Որ հենց նայես նրան՝ եղջյուրներն անմիջապես երևան: Ստոր մարդ, ինձ փոխել մի ճիվաղի հետ:

ԱՐԳԱՄ - *(Մտահոգ ու հիասթափված շրջում է)* Մի՞թե իմ նկատմամբ ոչ մի զգացում չունեիր, Մարիամ: Մի՞թե եկար միայն այդ տարօրինակ վրեժը լուծելու համար:

ՄԱՐԻԱՄ - Սիրելիս, սիրելիս, ե՞ս պետք է ասեմ, որ դու իմանաս, որ մեր հանդիպման առաջին իսկ օրից հրապուրված եմ եղել քեզանով: Եվ ինչո՞ւ կեղծենք, դա դու էլ էիր զգում և Վռամն էլ, որը շատ անգամ է նախատել ինձ՝ քո նկատմամբ իմ առանձնահատուկ վերաբերմունքի և ուշադրության համար: Բայց ես տանում էի ամեն ինչ, նախ որովհետև նա իրավացի էր և հետո ամենակարևորը՝ գիտեի, որ ես մաքուր եմ և երբեք քո սիրուհին չեմ դառնա:

ԱՐԳԱՄ - Ինչո՞ւ...

ՄԱՐԻԱՄ - Որովհետև դրանով ամեն ինչ շատ կհասարականար, ինչպես որ իմ կարծիքով արդեն եղավ: Ուզո՞ւմ ես նորից ասեմ՝ անկախ քո նկատմամբ իմ զգացմունքից, ես չէի դավաճանի նրան, եթե նա առաջինը չդավաճաներ ինձ և քեզ:

ԱՐԳԱՄ - Սպասիր, Մարիամ, առաջինը հասկացա, բայց ի՞նձ ինչով է դավաճանել:

ՄԱՐԻԱՄ - Նա է գրել այն անստորագիր նամակը, որը քեզ այդքան տառապանք ու վիշտ բերեց, սիրելիս:

ԱՐԳԱՄ - Ի՞նչ, դա անհնարին է: Դա անհնարին է, Մարիամ: Դու գիտե՞ս, որ այնտեղ գրված է նաև, թե դու իմ սիրուհին ես:

ՄԱՐԻԱՄ - Գիտեմ: Եվ դա էլ էր այն պատճառներից մեկը, որ ես քո սիրուհին դարձա:

ԱՐԳԱՄ - Գլուխս կտրաքվի... Որպեսզի չխելագարվեմ, որպեսզի որևէ բան հասկանամ, պարզ խոսիր, հա՞, Մարիամ: Ասա, ինչի՞ց ես ենթադրում, որ Վռամն է հորինել այդ նամակը:

ՄԱՐԻԱՄ - Նա այդ նամակի կետերի մասին ինձ հետ խոսել է դեռևս այն ժամանակ, երբ ասպարեզում ոչ այդ նամակը կար և ոչ էլ քո հեռացման հետ կապված այդ ամբողջ պատմությունը:

ԱՐԳԱՄ - Եվ դու... իմանալով այդ ամենը, լռո՞ւմ էիր, Մարիամ...

ՄԱՐԻԱՄ - Չէ, չէ, արդեն պատրաստվում էի ամեն ինչ հրապարակ հանել, իսկ այդ պատմությունն արդեն լցրեց իմ համբերության թասը... Մոռանալ, ուրանալ այն ամենը, ինչ ես արել եմ նրա համար... ինձ փոխել մի.. մի... Չէ, դու պետք է հասկանաս ինձ, սիրելիս, ես քաղքենի չեմ, ի սեր աստծո: Ես ընդունում եմ, որ կարող է լինել համակրանք, հափշտակություն... Բայց հանուն ո՞ւմ: Եթե նա ինձանից գեղեցիկ ու ջահել մեկով հրապուրվեր, չեմ թաքցնում, ցավ կզգայի, բայց ոչ վիրավորանք, ոչ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

նվաստացում: Բայց ինձ, ինձ, որ նույնիսկ հիմա չեմ կարողանում անցնել փողոցով, չեմ կարողանում թաքնվել անցնող-դարձողների հիացական, մերկացնող հայացքներից ... Ինձ փոխել մի ...

(Արգամը նստել է փակ աչքերով)

Դու ինձ չե՞ս լսում, Արգամ: Քնե՞լ ես, ինչ է...

ԱՐԳԱՄ - *(Փակ աչքերով)* Ափսոս...

ՄԱՐԻԱՄ - Ի՞նչն ափսոս... Դու ինչի՞ մասին ես ասում...

ԱՐԳԱՄ - Ափսոս, որ քեզ Վռամ Մաշուրյանն է ուղարկել ինձ մոտ: Ի՞նչ կլիներ հենց այնպես գայիր, Մարիամ...

(Մթնեցում)

ՏԵՍԱՐԱՆ

(Արգամը խոսում է ավտոմատ հեռախոսով)

ԱՐԳԱՄ - Բարի լույս, Մարինե: Սամսոն Իվանիչին եմ խնդրում: Ես եմ, Մարինե: Ի՞նչ, տեղափոխվե՞լ է: Որտե՞ղ: Անտառային տնտեսության կոմիտե՞: Ի՞նչ, նախագահի տեղակալ... *(Յած է դնում լսափողը, քրքջում է ջղային:)* Կեցցես, Սամսոն Իվանիչ, կեցցես, զարմանալի էակ, դու իսկական պրոֆեսիոնալ խաղամոլ ես, եղբայր: Դու ամենակենսունակ մարդն ես, որովհետև ամոթ չունես և թքած ունես այնպիսի պայմանականությունների վրա, ինչպիսին արժանապատվությունն է համարվում, ազնվությունը, խիղճը, պարկեշտությունը: Քեզ ինչպես էլ նետեն, կատվի նման չորս թաթի վրա ես կանգնելու և շարունակելու ես լպստել շրթունքներդ, ասես թե ոչինչ էլ չի պատահել:

Տես թե ոնց է լուծել հարցը: Խոսքին տեր եղավ, որովհետև դուրս է եկել աշխատանքից: Իսկ թե ո՞ւր գնաց, արդեն ձեր գործը չէ, ընկեր Արգամ Մանասյաններ: Պայմանի մեկ ուրիշ կետ չի եղել: Լավ, բայց ինչպե՞ս կարողացավ այդքան արագորեն տեղափոխվել: Ո՞վ է այս տեղափոխողը, որ մասնագիտությամբ երկրաբան կամ պատմաբան թեթև արդյունաբարության մինիստրին աշխատանքները ձախողելու համար շինարարության մինիստր է դարձնում, հետո առևտրի մինիստր, իսկ այնտեղից էլ եկեղեցական խորհրդի նախագահ կամ ֆիզկուլտկոմիտեի նախագահ: Եթե մսի ու կաթի արդյունաբերության մինիստրը չի կարողանում աշխատել, նույն գծով տեղակալ դարձրեք կամ վերջապես մսագործ: Ինչո՞ւ եք տանում այնպիսի տեղ, որից ինքը գաղափար չունի: Միայն նրա համար, որ նա ղեկավա՞ր է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

Կենտկոմի քարտուղարի առանձնասենյակը: Քարտուղարը նայում է սեղանին դրված թղթապանակներին, սեղմում է սելեկտորի կոճակը:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ընկեր Գուլանյան, բարի լույս, կարծես թե պայմանավորվել էինք *(ինչ-որ թղթեր է կարդում: Հայտնվում է Գուլանյանը)*

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Ես ձեր կանչին էի սպասում: Բարով եք եկել, ընկեր Ալթունյան:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Բարով է, բարով... Սա ի՞նչ է...

ԳՈՒԼԱՆՅԱՆ - «Արգիշտի» գործարանի դիրեկտոր Արգամ Մանասյանի գործը: Ինչպես կարգադրել էիք:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Հա... *(պայուսակից մի տուփ սիգարեթ է հանում)* Իսկ սա՞ ինչ է:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Առաջին անգամ եմ տեսնում: «Պատրանք» Մեզ մո՞տ է արտադրվում:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ընկեր Գուլանյան, գիտե՞ք թե ով է ինձ տվել այս տուփը: Միութենական մինիստրը: Եվ ես էլ ձեզ նման կաս-կարմիր կտրեցի, երբ իմացա որ այդ ծխախոտը մեզ մոտ է արտադրվել: Ինչո՞ւ կարգին չեք աշխատում: Գուցե հոգնե՞լ եք:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Ոչ, ոչ, չեմ հոգնել... չեմ հոգնել, Տիգրան Արշակիչ:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Գիտե՞ք, թե ինչպես էր խանդավառվել մինիստրը: Սա հրաշք է, ասում էր: Սա հենց այն է, ինչ պետք է մեզ: Աննիկոտին ծխախոտ: Սա մաքուր ոսկի է: Եվ գիտե՞ք ինչ ասաց: Ասաց, հայտնի է դարձել, որ ձեր հանրապետությունում չեն ուզում արմատավորել այն: Եվ ընդհանրապես, ասաց ավելի ճիշտ չի՞ լինի, եթե Մոսկվայում արտադրենք:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Չեմ հասկանում, չեմ հասկանում, թե ինչպես է այդ ծխախոտը Մոսկվա հասել:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Դե երևի Երևանից Մոսկվա ավելի կարճ ճանապարհ է, քան գործարանից մինիստրություն կամ ձեր առանձնասենյակը: Իսկ Բադալյա՞նն ինչ է անում, գոնե նա գիտի՞ այդ ծխախոտի մասին:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Սամսոն Իվանիչը տեղափոխվել է, Տիգրան Արշակիչ:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ինչպե՞ս թե: Ինչո՞ւ:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Խնդրել է, որ ազատեն: Ասել է, թե չի կարողանում նոր ժամանակների պահանջով ինչպես հարկն է աշխատել:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Տեսար դու... Ուրեմն դրան էլ հասանք: Սա երևի առաջին դեպքն է, չէ՞: Իսկ որտե՞ղ է հիմա: Թոշակի՞ անցավ:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Ոչ: Անտառտնտեսության կոմիտե ուղարկեցին: Տեղակալ է:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Տեղակա՞լ: Ինձ թվում է, թե մեր հանրապետությունում այնքան ծառ չկա, ինչքան այդ կոմիտեում տեղակալներ...

ԳՈՒԼԱՆՅԱՆ - *(Շողոքորթ ծիծաղով)* Շատ ճիշտ եք ասում, Տիգրան Արշակիչ:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Հուսով եմ, որ նոր մինիստր դեռ չեք նշանակել...

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Ինչ եք ասում, ընկեր Ալթունյան, ձեզ էինք սպասում:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Շնորհակալ եմ, որ գոնե նշանակելիս հարցնում եք... Բայց չեմ թաքցնի, սա այն դեպքն է, որ չեմ բարկանում: Որովհետև համընկնում է իմ ծրագրերին: Ուրեմն այսպես. նախագիծ կազմեք... Արգամ Պետրոսի Մանասյանին մինիստր նշանակելու մասին:

(Գուլանյանն ապշում է)

Մի զարմացեք, ընկեր Գուլանյան, այդ բնագավառում արմատական վերակառուցումներ թելադրող նրա առաջարկների մասին ես պատմեցի վերևներում: Եվ պարզվեց, որ դրանք ճիշտ ժամանակին են և այսօրվա հրամայական պահանջը: Դե ուրեմն թող ինքն էլ իրագործի իր մտահղացումները: Նրանից լավ ուրիշ ո՞վ կարող է հասկանալ և իրականացնել դրանք: Հը, ի՞նչ պատահեց: Թե՞ դուք համաձայն չեք:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Դա... դա անհնարին է:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ի՞նչն է անհնարին:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Նա... նա վարկաբեկված է, ընկեր Ալթունյան:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ինչպե՞ս թե վարկաբեկված է... Ո՞վ է վարկաբեկել:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Նրա վերաբերյալ քրեական գործ է հարուցված:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ինչի՞ հիման վրա է քրեական գործ հարուցվել, Գուլանյան: Ոչինչ չեմ հասկանում:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Բա դուք չասացի՞ք, որ նա իր տեղում չէ: Ասացիք, չէ՞, Տիգրան Արշակիչ, հո չեք մոռացել: Ասացիք՝ դա ի՞նչ նրա տեղն է: Դե մենք էլ Սամսոն Իվանիչի հետ... հետո մի նամակ կար...

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Լսեք, դուք հո չե՞ք խելագարվել: Ես ասացի՝ նա իր տեղում չէ որովհետև արդեն մտածում էի նրա առաջխաղացման մասին: Ես ասացի՝ դա նրա տեղը չէ, որովհետև ամբողջ բնագավառի վերակառուցման և վերափոխման մասին պետականորեն մտածող մարդը չպետք է նստեր ու մնար մի գործարանում: Ահա թե ինչ եմ ասել ես: Իսկ դուք... դուք և այդ Սամսոն Բաղալյանը իրարից առաջ ընկնելով շտապել եք հոշոտել նրան, հա՞: Ինչի՞ համար, միայն նրա համար, որ սխա՞լ եք հասկացել ինձ:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Տիգրան Արշակիչ... Բայց նա որոշ մեղքեր ունի:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Իսկ դուք չունեք, հա՞... Մեղքեր... Հենց միայն սրա համար հանգիստ կարելի էր ձեր նկատմամբ քրեական գործ հարուցել: Զե՛ր: Ձեր այդ ջանասիրությամբ դուք մարդ կարող եք սպանել, ընկեր Գուլանյան: Ինձ թվում է, դուք անհրաժեշտ հետևություններ կանեք սրանից: Ինչպես Սամսոն Բաղալյանն է արել...

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Ընկեր Ալթունյան...

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Բայց նախքան այդ՝ որոշման նախագիծ կազմեք Արգամ Մանասյանի մինիստր նշանակելու մասին:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Բայց նա վարկա...

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Ինչպես վարկաբեկել եք, այնպես էլ արդարացրեք ու սրբագործեք նրան: Հիմա էլ հակառակն արեք, անմիջապես կարձեք նրա քրեական գործը, փառաբանեք, նրա լուսանկարներով հոդվածներ տպագրեք թերթերում, հարցազրույց անցկացրեք նրա հետ վերակառուցման ծրագրերի մասին, ռեկլամեք, ժողովրդին ծանոթացրեք նրա ստեղծած աննիկոտին ծխախոտին: Մի շաբաթ ժամանակ եմ տալիս: Դրանով կպարզվի թոշակի՞ եք անցնում, թե նշանակվում եք անտառտնտեսության կոմիտեի մի նոր տեղակալ:

ԳՈՒԼԱՆՅԱՆ - Ամեն ինչ, ամեն ինչ կանեմ, Տիգրան Արշակիչ:

ՔԱՐՏՈՒՂԱՐ - Հիմա էլ հո սխալ չե՞ք հասկանում: Ձեր արածի լրիվ հակառակը պետք է անեք: Չէ՞ որ դուք ամեն ինչ կարող եք և ընդունակ եք ամեն ինչի: Ուրեմն առաջին հերթին՝ նախագիծը:

(Մնում է մենակ, ձեռքերով գլուխը բռնած: Բարձրացնում է գլուխը, հառաչում է)

Օ՜ֆ, մեզ համար հանգիստ ապրում էինք էլի:

ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

(Դատախազի օգնականի սենյակը: Նստած է մի երիտասարդ: Արգամ Մանասյանին տեսնելով ոտքի է կանգնում)

ԴԱՏԱԽԱԶ - Բարև ձեզ: Ես շրջանի դատախազն եմ: Սպասում էի այստեղ... Ինձ հանձնարարված է ներողություն խնդրել ձեզանից և հայտնել, որ ձեր նկատմամբ հարուցված քրեական գործը մերժված է:

ԱՐԳԱՄ - Ինչի՞ համար:

ԴԱՏԱԽԱԶ - Հանցակազմի բացակայության պատճառով:

ԱՐԳԱՄ - Գուցե թյուրիմացություն է... Հո չե՞ք շփոթում, ինձ կալանավորելու են այսօր: Ես Արգամ Մանասյանն եմ, «Արգիշտի»...

ԴԱՏԱԽԱԶ - Համարենք թյուրիմացություն... ես ձեզ լավ եմ ճանաչում, ընկեր Մանասյան:

ԱՐԳԱՄ -Ուրեմն ինձ լավ եք ճանաչում... Իսկ որտե՞ղ էիք մինչև հիմա, մարդ աստծո: Ինչո՞ւ էիք իմ գործը հանձնարարել մեկի, որն ինձ բոլորովին չէր ճանաչում:

ԴԱՏԱԽԱԶ - Ես արձակուրդի մեջ էի: Բայց դա որևէ նշանակություն չունի: Ես անկեղծ կլինեմ: Վերևից էին կարգադրել, որ ձեր դեմ գործ բացվի ու վերևից էլ կարգադրել են, որ փակենք:

ԱՐԳԱՄ - Ո՞վ:

ԴԱՏԱԽԱԶ - Ես ուրախ եմ, որ կարող եմ ասել՝ դուք ազատ եք, Արգամ Պետրովիչ:

ԱՐԳԱՄ - Հիմա ուրեմն ես կարո՞ղ եմ գնալ:

ԴԱՏԱԽԱԶ - Իհարկե: Ուր ուզում եք... Եվ կրկին ու կրկին ներողություն…

ԱՐԳԱՄ - Է՛հ... *(Շրջվում է, որ հեռանա)*

ԴԱՏԱԽԱԶ - Արգամ Պետրովիչ, միևնույն է, քիչ հետո կիմանաք, բայց մեր կողմից ձեզ հասցրած վերքին ինչ-որ չափով սպեղանի դնելու համար, ուզում եմ մի ուրախ լուր հայտնել ձեզ...

ԱՐԳԱՄ - Ես այնքան վաղուց որևէ ուրախ բան չեմ լսել: Որ չգիտեմ՝ կուրախանամ, թե չէ:

ԴԱՏԱԽԱԶ - Միայն խոսքը մեր մեջ մնա: Խիստ գաղտնի է: Առայժմ մի քանի հոգի գիտեն միայն: Ձեզ նշանակում են մինիստր:

ԱՐԳԱՄ - Ի՞նչ: Ծաղրո՞ւմ եք, ինչ է:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԴԱՏԱԽԱԶ - *(ծիծաղում է)* Միթե ես ինձ թույլ կտայի, Արգամ Պետրովիչ, ամենահավաստի փաստն եմ հայտնում: Վերևում էլ թյուրիմացություն է եղել: Հետո՝ մեծ դեր է խաղացել ձեր ստեղծած ծխախոտը, որ կենտկոմի քարտուղարը բերել է Մոսկվայից... Այնպես որ, ես առաջինն եմ շնորհավորում...

ԱՐԳԱՄ - *(Շրջվում է դեպի դահլիճը)* Բա ո՞նց եղավ, նույն մարդը չէի՞, շան որդիներ, էս ի՞նչ եք անում...

ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Արգամի տունը: Սեղան է գցված

ԱՐԳԱՄ - *(Հասմիկին, ապշած)* Այս ովքե՞ր են մեր տանը:

ՀԱՍՄԻԿ - Արգամ, Արգամ ջան, ես քեզ շատ եմ խնդրում: Հանկարծ չկոպտես որևէ մեկին, հա՞: Մարդիկ վաղուց մեր տանը չեն եղել: Հիմա եկել են...

ԱՐԳԱՄ - Բայց ովքե՞ր են դրանք... Այսինքն ինչո՞ւ եմ հարցնում... Նույն ձայներն են, նույն... Բայց ինչպե՞ս են եկել, ինչպե՞ս են նայելու իմ աչքերին... Ես, ե՞ս ինչպես նայեմ նրանց... Թողնեմ փախչե՞մ, ինչ է... ախր ես ատում եմ նրանց և ամաչում եմ... ամաչում եմ նրանց փոխարեն: Ինչո՞ւ են եկել, ասա, Հասմիկ: Ինչո՞ւ են եկել նրանք:

ՀԱՍՄԻԿ - Որովհետև ինձանից բացի բոլորն էլ գիտեն, որ քեզ մինիստր են նշանակում:

ԱՐԳԱՄ - Խելագարվել կարելի է... Իսկ ինձ որպես խիստ գաղտնիք հայտնեցին:

ՀԱՍՄԻԿ - Հա, Արգամ ջան, Բակուր Եգանյանի կինն է զանգահարել մի քանի անգամ: Կարևոր բան ունի ասելու:

ԱՐԳԱՄ - Բակուրի կինը՞... *(Հենց միջանցքում հավաքում է համարը)* Նազիկ, դո՞ւք եք, Արգամն է: Հիվանդ պառկա՞ծ է Մոսկվայում: Մրսե՞լ է: Ո՞ր ռեյսով եք թռչում: Գիշե՞րը: Գուցե ես էլ ձեզ հետ գամ: Ես ի՞նչ կարող եմ անել ձեզ համար: Ասացեք, խնդրում եմ: Գուցե դրամ է պետք: Մենք եղբայրներ ենք, չէ՞... Դե լավ, լավ, Նազիկ, սիրելի Նազիկ, Բակուրին ասեք, որ նրա ծխախոտը տեղ է հասել: Ասեք, որ շնորհակալ եմ նրան և մինչև կյանքիս վերջը չեմ մոռանա այն, ինչ նա արեց ինձ համար, մեզ համար: Ասեք, որ սպասում եմ անհամբեր: Թող շուտ գա, որ սկսենք գործը: Եվ համբուրեք նրան իմ կողմից: Սիրո՞վ: Ուրեմն հիանալի է, բարի ճանապարհ, քույրիկ... *(նայում է սեղանի կողմը, չգիտե ինչ անել)*

ՄԱՐԻԱՄ - Ուղղակի շատ հետաքրքիր է, թե որտե՞ղ էիք մինչև հիմա, Արգամ Պետրովիչ... *(աչքով է անում)*

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org

ԱՐԳԱՄ - Գնացել էի Ուջան, մորս տեսնելու, տիկին Մարիամ:

ՎՌԱՄ - Տեսա՞ք... Ես ձեզ չէի՞ ասում, որ Արգամ Պետրովիչը այսպիսի նշանավոր մի օր անպայման գնացած կլինի իր սիրելի մայրիկին տեսնելու, չէի՞ ասում:

ՄՀԵՐ - Ասած կլինես... Գուցե թե գրած էլ կլինես...

ՎՌԱՄ - Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

ՄԱՐԻԱՄ - Գործ չունես, սիրելիս, չե՞ս տեսնում, որ նա արդեն հարբած է:

ՄՀԵՐ - Աշխա՛րհ-աշխարհ, և այս խոսքերը ես լսում եմ իմ միակ կարգին չխմած օրը:

ՄՈՒՔԱՅԵԼ - Ներիր ինձ, հարևան... Որ քեզ հանել էին, կորցրել էի ինձ: Իզուր տեղը ղալմաղալ զցեցի, թե ինչ է ձեր տնից մեր գլխին մի քիչ ջուր-մուր էր թափվում: Ախպեր, հիմա ինչ ուզում եք թափեք... Ու որպեսզի իմանաս, որ իմ սրտի մեջ այ էսքան չարություն չկա, ըհը, տես, էս մի բաժակը իմ կողմից եմ խմում, էս մեկն էլ մեր կնկա կողմից: Մի քիչ տկար էր, չկարողացավ ներկա լինել: Ներողություն...

ՍՈՒՍԱՆ - Հետո էլ ասում են, թե ալկոհոլից շուտ են մեռնում...

(Արգամը հերթով նայում է նրանց, չգիտե ինչ ասել)

ԱՐԳԱՄ - Ի՞նչ ասեմ ձեզ... դուք ասեք, եթե կարող եք, ի՞նչ ասեմ ձեզ...

ՄՀԵՐ - Ասեմ, ասեմ, Արգամ Պետրովիչ... Ասեք՝ բարև ձեզ, ավտոբուսի ժողովուրդ...

(Բոլորը զարմացած նրան են նայում)

Ճարներդ ինչ, պիտի տանեք մեզ, էլի, Արգամ Պետրովիչ: Ասենք թե մեզ իջեցրիք ավտոբուսից, ուրիշ մարդիկ չե՞ն նստելու: Ինչո՞վ եք համոզված, որ նրանք լավն են լինելու մեզանից: Կամ ենթադրենք իջանք, ի՞նչ պիտի անենք, մի ուրիշ ավտոբուս չե՞նք նստելու: Էլ ի՞նչ տարբերություն: Բոլորս էլ նույն մարշրուտով, նույն տեղը պիտի գնանք, չէ՞: Կայանը նույնը չէ՞: Հո մեզ չե՞ք թողնելու ճանապարհին, իսկ դուք մենակ գնաք: Հետո, Արգամ Պետրովիչ, հո միշտ չէ, որ ուղևորն է մեղավոր լինում իր վիճակի համար: Կյանքն էլ իր հերթին է ստիպում, էլի: Ճիշտ չե՞մ ասում, չէ, ասեք, ճիշտ չե՞մ ասում, ցավդ տանեմ:

(Արգամը մռայլ, հոգնած, տխուր մեկիկ-մեկիկ նայում է խեղճացած, ժպտացող Մհերին, լարված, տագնապած, սպասող դեմքերով մարդկանց ու ասում է, գրեթե հառաչելով)

ԱՐԳԱՄ - Բարև ձեզ, ավտոբուսի ժողովուրդ:

Copyright © Artashes Kalantarian Foundation ~ http://kalantarian.org/artashes ~ artashes@kalantarian.org